Մեր ժողովուրդը սովոր է, որ երկրի ղեկավարը պետք է սոլիդ լինի, լոջմիտ, ծանրակշիռ պահվածք ունենա, ու, ի դեմս բժշկուհու, դաս է տալիս Փաշինյանին: Բայց պացիենտը չի հասկանում: Գետնին նայելով, ծիծաղում է. «Ներքեւ՝ ո՞ւր, որտե՞ղ եմ իջել»: Էսպես անհոգ եւ ուրախ էլ կանցներ կիրակին, եթե չորոշեր գնալ եկեղեցի:

Կարդացեք՝ էջ 4

Ասեմ Ձեզ, որ անգամ սովետական տարիներին չկար նման բան: Այն տարիներին, երբ, օրինակ, արգելում էին ինչ-որ ֆիլմ ցուցադրել, արգելում էին միայն մեծ դահլիճներում, բայց, օրինակ, Երեւանում կար Ճարտարապետների միության դահլիճ, որտեղ արգելված ֆիլմեր էին ցուցադրում: Այսօր Հայաստանում նույնիսկ դա հնարավոր չէ:

Կարդացեք՝ էջ 6



Ոգեւորված էին, այն ժամանակ 18-20 տարեկան էին, ջահելներին բնորոշ է հեղափոխական անհեռատես ոգեւորությունը: Հիմա մի մասն անպայման հիասթափություն ապրել է, գրող են, ի վերջո, տեսնելու էին՝ այս ամենն ուր կգնա: Բայց քանի որ խիստ էին խանդավառված, հիմա երեւի չեն ուզում հետքայլ անել, իրենց սխալը խոստովանել:

Կարդացեք՝ էջ 7

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 51 (4186), 1 ապրիլ, չորեքշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Չնայած Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստան» կուսակցության մասին տեւական ժամանակ լուրեր կային, որ միայնակ են մասնակցելու ընտրություններին՝ որպես կուսակցություն, սեփական ցուցակով, եւ դաշինք չեն կազմելու որեւէ ուժի հետ, բայց քանի որ բոլոր հարցումներով հասկացել են, որ ընդդիմության ֆավորիտն այս ընտրություններում իրենք են եւ կարող են հավակնել ծանրակշիռ քվեներ ստանալու, որոշել են դաշինքով մասնակցել: Մի կողմից՝ ակնհայտ է, որ այլ ուժերի հետ համագործակցության կարիք իրենք, մեծ հաշվով, չունեն, սակայն հաղթանակի հավակնող ուժը նաեւ փորձում է ամեն ինչ անել, որ փոքր ուժերն առանձին չմասնակցեն եւ ձայներ չփոշիացնեն, ուստի արդեն երեկ հայտարարեցին, որ առաջին համագործակցությունն է կնքվել՝ Հարություն Հարությունյանի նորաստեղծ «Նոր դարաշրջան» եւ Նաիրի Սարգսյանի «Միավորված հայեր» կուսակցությունների հետ, որոնք նոր ուժեր են: Միավորված ուժը գալիք ընտրություններին կմասնակցի «Ուժեղ Հայաստան՝ Սամվել Կարապետյանի հետ» անվան ներքո: Որոշ տեղեկություններով, դաշինք կազմելուն նպաստել է նաեւ այն, որ բոլոր սոցհարցումները ցույց են տվել՝ մարդիկ պահանջում են, որ գործարարն առաջնորդի ընդդիմադիր ուժերի միասնական դաշտը, եւ ավելի շատ նրա անձի հետ են հույսեր կապում, քան իր թիմի: Նաեւ դա է պատճառը, որ ընտրություններին մասնակցող միավորի անվան մեջ նշվելու է Սամվել Կարապետյանի անունը:

Մեզ հասած լուրերով՝ Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստան» կուսակցության գրասենյակների դիմաց 24/7 ռեժիմով ինչ-որ մեքենաներ են կանգնած, եւ ինչ-որ մարդիկ՝ իշխանության «ռազվեդչիկները», շուրջօրյա հերթապահություն են իրականացնում, նկարահանումներ անում, արձանագրում, թե ով մտավ ընդդիմադիր ուժի գրասենյակ, ով՝ դուրս եկավ: Հետո փորձում են ճշտել այդ մարդկանց ինքնությունը, բնակության հասցեն, ապա «բացատրական» զրույցներ, ճնշումներ սկսում նրանց կամ նրանց ընտանիքի անդամների նկատմամբ: Նախ փորձում են պարզել, թե ինչու էին գնացել, ինչ կապ ունեն Կարապետյանների հետ, ինչ են ուզել կամ ստացել: Մեզ պատմեցին, որ մարզերից մեկում մեկ անգամ ընդամենը 15 րոպեով գրասենյակ մտած երիտասարդի հորը հաջորդ օրն իսկ իր հիմնարկի ղեկավարն ասել է՝ եթե ձեր ընտանիքը կապ ունի «Ուժեղ Հայաստանի» հետ, չես կարող ինձ մոտ աշխատել:

Ո՛չ խիղճ, ո՛չ մարդկություն

Քրեական օրենսգիրքը սեփական շահերին ծառայեցրել են Հայաստանի բոլոր ժամանակների իշխանությունները, բայց սրանք մի ուրիշ կատաղությամբ են դա անում՝ խտրականություն չդնելով իրենց թիրախների միջեւ: Կին կլինի, տարեց մարդ կլինի, հիվանդ կլինի, անչափահաս կլինի, ազգային հերոս կլինի՝ ոչ մի նշանակություն չունի: Իհարկե, եթե օրենքը նույն խստությամբ կիրառվեր բոլորի հանդեպ, կարող էինք մտածել, որ դաժան են բոլորի նկատմամբ, եւ եթե սկզբունքային մոտեցում է՝ աշխատում է բոլորի պարագայում: Բայց մենք աջուձախ տեսնում ենք պատժից խուսափող յուրայիններ, ծանր հանցանք կատարած եւ ազատության մեջ մնացած անձինք, տարբեր հանցագործությունների նկատմամբ աչք փակելու բազում օրինակներ: Եվ, առհասարակ, եթե խոսքի համար որեւէ մեկն այս երկրում դատվում է, ապա առաջինը պետք է դատվի Նիկոլ Փաշինյանը: Եթե բռնության մեղադրանք է հարուցվում 18-ամյա պատանու նկատմամբ, որն ինքնապաշտպանության է դիմել եւ ոչ մեկին չի էլ վնասել, ապա բռնություն կիրառած ոստիկանները, մարդկանց վրա մարտական նռնակներ նետած ուժայինները, ընդդիմադիրներին կամերաների առաջ ծեծած պատգամավորներն ու Նոր Նորքի թաղապետը պետք է վաղուց պատիժ կրելիս լինեին: Այնպես որ, երբեք Հայաստանում օրինականությունն այսքան նսեմացված չի եղել, եւ արդարությունն այնքան ոտնահարված չի եղել, որքան հիմա է: Եվ, առհասարակ՝ ամեն զանցանքի ու մանր հանցանքի պատճառով մարդկանց բանտ նետելու համար մի ուրիշ հոգեխեղվածություն պետք է ունենաս, անհաղթահարելի ատելություն պետք է տածես քո ազգի հանդեպ: Իսկ 18 տարեկան գերազանց սովորող, մտավորական ընտանիքի զավակին կալանավորելու համար պետք է ոչ զավակ ունենաս, ոչ խիղճ, ոչ տղամարդկություն: Եվ պետք է սարսափից կորցրած լինես իրականության զգացումդ ու բարոյականությունդ:

Կիրակի օրը Սուրբ Աննա եկեղեցում տեղի ունեցած միջադեպով քրեական հետապնդման ենթարկվող Դավիթ եւ Միքայել Մինասյանների մայրը՝ Գայանե Մինասյանը, 2000-ականների սկզբին Գերմանական տեխնիկական համագործակցություն (GTZ) կազմակերպության Իջեւանի գրասենյակի ղեկավարն էր: Նրա աջակցությամբ Տավուշի մարզում ստեղծվել են համայնքների 4 միություններ: Այդ գրասենյակի միջոցով, Գերմանիայի ֆինանսավորմամբ Տավուշի մարզում հարյուրավոր ծրագրեր են իրականացվել, որոնք նպաստել են Իջեւանի, Նոյեմբերյանի, Դիլիջանի, Բերդի բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացմանը: Գայանե Մինասյանի ղեկավարությամբ Տավուշում մեծ ծավալի հանրօգուտ գործ է արվել:

ՊՆ-Ն ՄՈՌԱՑԵԼ՝ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՄԲ Է ԶԲԱՂՎԱԾ

Իշխանական գրեթե բոլոր պաշտոնյաները լծվել են նախընտրական արշավին, պաշտոնական քարոզչությունը դեռ չսկսված՝ հակառակորդի դեմ հակաքրոզչություն են իրականացնում, անգամ ամենաչեզոք՝ Պնախարար Սուրեն Պապիկյանը: ՊՆ-ում ուղղակի ապշած են նրա պահվածքից: Երեկ նա իր էջում Սամվել Կարապետյանի կուսակցության մասին Հակակոռուպցիոն կոմիտեի հաղորդագրություն-տեսագրությունն էր տեղադրել, որով հայտնում էին Արմավիրում ինչ-որ անձանց կողմից ընտրակաշառք բաժանելու մասին, եւ գրել էր. «Ձեր հին ձեւերը բախվելու են Իրական Հայաստանի պետական ինստիտուտների հետեւողական աշխատանքին եւ հաստատված օրինականությանը. պետության համը ձեզ, վստահաբար, դուր չի գա»: ՊՆ մեր աղբյուրն ասաց, որ նախարարը, փոխանակ իր ղեկավարած համակարգի խնդիրներով զբաղվի, քաղաքական հայտարարություններ է անում: Դիցուք, օրերս Արարատի զորամասում ծառայություն իրականացնելիս հանկարծամահ է եղել մոտ 40 տարեկան գումարտակի հրամանատար՝ սրտի կանգ է գրանցվել, կյանքը փրկել չի հաջողվել: ՊՆ խոսնակ Արամ Թորոսյանը մեզ վստահեցրեց, որ ծառայություն իրականացնելիս չի պատահել դեպքը. «Ժամկետային զինծառայող չէ, սպա է եղել, մահվան դեպքը շաբաթներ առաջ է եղել, դասակարգվում է որպես ծառայության հետ չկապված հանգամանքներում առողջական պատճառով մահվան դեպք, ինչի առնչությամբ, ինչպես բոլորին հայտնի է, ՊՆ-ն պաշտոնական իրազեկում չի կատարում»: Բայց օրեր առաջ Վարդենիսի զորամասում տեղի ունեցած դանակահարության մասին էլ ՊՆ-ն կցկտուր հաղորդագրություն տարածեց՝ վարժական հավաքի ընթացքում արձանագրվել է դանակահարման դեպք, մինչդեռ միջադեպը տեղի էր ունեցել դիրքերում՝ սահման պահելիս:

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆԸ, ՀԱՎԱՆԱԲԱՐ, ՇԱՏ Է ԾԱՆՐ ԱԶԴԵԼ ՆՐԱ ՎՐԱ

ՍԲ. ԱՆՆԱ

«Հրապարակի» զրուցակիցը **Վրթանես քահանա Բաղալյանն** է:

- Տեր Հայր, կիրակի օրը՝ Ծաղկազարդի տոնին, Սուրբ Աննա եկեղեցու ներսում հերթական խառնակչությունն ու բախումը եղան, քանի որ Նիկոլ Փաշինյանը որոշել էր պատարագի կեսից՝ մարդկանց ճեղքելով հասնել խորանի մոտ: Սուրբ պատարագի ժամանակ քաոս էր տիրում, արդյունքում երկու 18-ամյա երիտասարդի մեղադրանք է առաջադրվել, ազատամարտիկ Գեւորգ Գեւորգյանն է ձերբակալվել: Առաջիկա կիրակի օրն էլ՝ ապրիլի 5-ին, Սուրբ զատկի տոնն է: Ոմանք մտավախություն ունեն, որ Փաշինյանն այդ կարեւոր եկեղեցական տոնն էլ կարող է իր գործողություններով ու ներկայությամբ փչացնել....

Նյութերը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

- Եթե նա՝ որպես երկրի ղեկավար, կամ կառավարության անդամներն իսկապես ցանկանան գնալ եկեղեցի եւ պատշաճ ձեւով մասնակցել Սուրբ պատարագի, ապա չեն անի նման սադրիչ քայլեր: Նրանք ունեն մեծ հնարավորություններ, կարող են եկեղեցիներին նախապես տեղյակ պահել, ապա գնան մայր տաճար կամ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, իրենք որը ցանկանան: Արարողակարգի համաձայն՝ իշխանությունը կարող է պատշաճ կերպով տոնել ցանկացած եկեղեցական տոն, բայց զարմանալի է՝ այս մարդիկ չեն ուզում եկեղեցական կարեւոր տոներին ներկայանալ պատշաճ կերպով: Այս մարդիկ նախընտրում են սրբազաններին կալանավորել, այլ ոչ թե նրանց հետ պատարագի մասնակցել: Պատարագի են գնում կեսից, երբ եկեղեցին մարդկանցով լեփ-լեցուն է: Հրմշտոց են ստեղծում, լավ իմանալով, որ իրենց հակաեկեղեցական արշավի պատճառով հասարակության մեծամասնությունն իրենց չի ընդունում: Անվտանգության աշխատակիցները սկսեցին հրմշտել եկեղեցու հավատացյալներին, ինչի արդյունքում դպրոցահասակ եղբայրները հայտնվեցին իրավապահների թիրախում: Չի կարելի դպրոցահասակ երեխաներին երկար ու մտասեւեռուն ձեւով նայել: Անվտանգության աշխատակիցներից մեկը՝ ականատեսների վկայությամբ, հարվածել է երեխանորի ծնողին, ինչի արդյունքում էլ տեղի է ունեցել այդ տհաճ միջադեպը: Ես մի բան լավ չհասկացա, այդ տղայի եղբորը եւ Գեւորգ Գեւորգյանին ինչո՞ւ ձերբակալեցին: Նա իրավիճակն էր խաղաղեցնում ընդամենը:

- Ինչո՞ւ է Փաշինյանը շարունակում եկեղեցի այցելել՝ իր անհավատ ու աթեիստ կողմնակիցների ուղեկցությամբ:

- Նախ ասեմ, որ նա իրավունք չունի եկեղեցում քաղաքական շոուներ անելու: Դրանով նա ծեսի կատարումն է խոչընդոտում: Նա չսպասեց մինչեւ վերջ անգամ, հետ գնաց, արդյունքում տեղի ունեցավ միջադեպը: Այդ մարդը չունի պատարագի մասնակցելու կուլտուրա, նա կեսից թողեց, դուրս եկավ, հենց այդ հրմշտոցների արդյունքում արժանացավ հասարակության հակազդեցություններին: Իրավապահների ապօրինության մասին այս պարագայում ավելորդ է խոսելը: Հիմնական սադրիչին պատասխանատվության ենթարկելու փոխարեն այն երիտասարդներին են ենթարկում պատասխանատվության, որոնք իրավիճակի զոհերն են: Միքայել եւ Դավիթ Մինասյաններն այժմ անտեղի մեղադրյալի կարգավիճակում են: Հատկապես Միքայել Մինասյան անուն-ազգանունը, հավանաբար, շատ է ծանր ազդել նրա վրա: Դեռահաս երիտասարդ է, բնական է, որ հրմշտոցներին այդպես պետք է արձագանքեր, իհարկե, ես հասարակությանը խորհուրդ եմ տալիս՝ Փաշինյանից, Ալեն Սիմոնյանից եւ մյուսներից հեռու մնալ, հատկապես երիտասարդներին եմ այս խորհուրդը տալիս, քանի որ նրանց ներկայությունը վտանգ է մեր հանրության համար: Երբ անվտանգության աշխատակիցները քաշքշում էին սարկավագներին, աչքիս առաջ եկավ այն օրը, երբ քաղաքացիական հագուստով անձինք մայր տաճարում՝ դեկտեմբերին հրմշտում էին կարգ պահող ոստիկաններին: Ստեփան Ասատրյանին ուղեկցող ոստիկաններին շատ նման էին, ինձ մոտ այն տպավորությունն էր, որ նույն մարդիկ էին: Վատ է, որ մեր իրավապահ մարմիններում նման մարդիկ կան, հուսով եմ, որ իշխանափոխությունից հետո նրանք կենթարկվեն պատասխանատվության՝ անօրեն պահվածքի համար: Ես մեր հանրությանն ուժ, համբերություն եւ իմաստնություն եմ մաղթում, որպեսզի կարողանան ճիշտ ընտրություն կատարել, ինչի արդյունքում մենք ունենանք աստվածապաշտ, եկեղեցասեր, հայրենասեր իշխանություններ:

Իջեւանում աղանդավորներ են հայտնվել

Իջեւանի բնակիչները մեզ հայտնում են, որ վերջերս քաղաքում հայտնվել են ինչ-որ կրոնական կազմակերպության անդամներ, որոնք Իջեւան համայնքի բնակիչներ չեն, ոչ էլ տեղացիները նրանց երբեւէ չեն տեսել նախկինում: Նրանք շրջում են քաղաքում, մտնում գրեթե բոլոր պետական, համայնքային կառույցներ, մասնավոր հիմնարկներ, բանկեր, անգամ Իջեւանի համայնքապետարանի շենքում են նրանց տեսել: Նրանք կրոնական գրականություն են բաժանում: Իջեւանցիները սկզբում կարծել են, թե դրանք բոլորիս հայտնի Եհովայի վկաներն են, սակայն պարզվել է, որ այդ անծանոթները կրոնական այլ հոսանքի անդամներ են: Բայց տեղացիները չեն կարողացել պարզել, թե կրոնական որ կազմակերպության անդամներն են, նրանց բաժանած կրոնական գրականության մեջ էլ այդ մասին որեւէ նշում չկա:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՂԱԾ՝ ԻՐ ՓԻՓԵՐԹՈՎ ՃԱՇՆ ԵՆՔ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նիկոլ Փաշինյանը պարտվել է Հայ առաքելական եկեղեցու դեմ պայքարում, բայց չի դադարում այցելել եկեղեցիներ՝ իր ներկայությամբ նախ պղծելով սրբատեղիները, ապա սադրելով, ինտրիգներ հյուսելով, խառնակչություններ անելով եւ այս ամենի ֆոնին շարունակաբար խոսելով իր լեգիտիմության մասին: Իշխանության ներկայացուցիչները՝ Նիկոլ Փաշինյան, Ալեն Սիմոնյան, Արսեն Թորոսյան եւ այլք, իրենց ներկայությամբ ատոմային ռումբ են հասարակության մեջ: Մարդիկ նրանց այնքան են ատում, որ անկանխատեսելի է, թե ամեն որպե ինչ կարող է պատահել: Բայց այս մարդիկ համառորեն ուզում են հանրությանը ցույց տալ, որ իրենք, մի կողմից, մեծ հաշվով թքած ունեն, թե մարդիկ ինչ են մտածում իրենց մասին, մյուս կողմից՝ մարդիկ պարտավոր են իրենց հանդուրժել եւ հաշտվել իրենց գոյության հետ, հակառակ դեպքում՝ ամենափոքր ընդվզման արդյունքում կհայտնվեն բանտում եւ կազատազրկվեն: Սակայն այս լարված մթնոլորտն ու հանրային դժգոհության աճն ամեն օր կարող են դառնալ արյունահեղության պատճառ, իշխանություններին ուղղված մերժումն օրեցօր ուժգնանում է, իսկ իշխանավորները ջայլամի քաղաքականություն են վարում:

Քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով Փաշինյանի քարոզարշավի մասին, ասում է. «Հատկապես այս շրջանում, որպեսզի մենք իրողություններն ու ակնկալիքները կարողանանք ճիշտ գնահատել, պետք է բոլոր հարցերում փորձենք լինել մաքսիմալ անկեղծ: Պետք է ընդգծել, որ մայրաքաղաքում Նիկոլ Փաշինյանին մարդիկ այնպես չեն դիմավորում, ինչպես, օրինակ, Գեղարքունիքի մարզում, հատկապես՝ գյուղական համայնքներում: Մայրաքաղաքում նրա վարկանիշն այնպիսին չէ, ինչպիսին քաղաքից դուրս է, թեպետ այստեղ էլ կան ՔՊ-ին սատարող շրջանակներ: Սա եւս պետք է նկատել եւ հասկանալ, թե ինչպես պետք է այստեղ աշխատանքը կազմակերպել: Ամենակարեւոր բաներից մեկը, որ Նիկոլ Փաշինյանը կարողանում է անել, հետեւյալն է. մենք խոսում ենք Նիկոլ Փաշինյանի գործողություններով պայմանավորված տեղեկատվական առիթի մասին: Մենք, մի շարք կարեւոր իրադարձություններ թողած, ստիպված քննարկում ենք նրա քարոզարշավը, այդ մարդը կարողանում է իր քայլարշավով տեղեկատվական հոսքերի հարցը կարգավորել եւ օգտագործել հօգուտ իրեն»:

Իսկ որո՞նք են այս պահին կարեւոր հարցերը, որոնք պետք է հանրությունը քննարկի, ըստ Զեզ: «Օրինակ՝ երկուշաբթի օրվա Ադրբեջանի օմբուդսմենի հայտարարությունը՝ կապված այն բանի հետ, որ իբրեւ հայերն իրենց ցեղասպանության են ենթարկել: Այս կոնցեպտը ոչնչացնում է Փաշինյանի խաղաղության կոնցեպտը: Հինգշաբթի օրը Փաշինյանը կառավարության նիստից հետո հայտարարեց, որ հրաժարվում է պատմական արդարությունից եւ փակում է ցեղասպանությունների մրցավազքը, բայց այստեղ խնդիրն այն է, որ Ադրբեջանը ցեղասպանությունների մրցավազքը նոր է սկսում: Սա լավագույն դրսեւորումներից մեկն է, որ եթե դու մոռացել ես, որ դու հայ ես, Ադրբեջանը չի մոռացել, ավելին՝ քեզ փորձում են հերթական անգամ պատժել: Նիկոլ Փաշինյանը տեղեկատվական հոսքերը լցնում է փիփերթով ճաշով, ձվածեղով ու չգիտես ինչերով, բայց ամենակարեւոր հարցերը մնում են շրջանցված: Այս ամենի միակ այլընտրանքն այն է, որ ընդդիմությունը փորձի այլընտրանքային օրակարգեր ձեւավորել: Պետք է ավելի ակտիվ հանդիպումներ ունենան մայրաքաղաքում եւ դրանից դուրս: Բայց նախքան այս՝ Նիկոլը լրահոսը լցնում է իրենով: Ընտրություններ են շուտով, հասկանում է, որ Երեւանում ունի բավականին ցածր վարկանիշ, եւ փորձում է մաքսիմալ մոբիլիզացիա իրականացնել, դրան գումարած՝ վարչական ռեսուրսներ եւ այլն: Վարչական ռեսուրս եւ գումարած իր ընտրազանգվածը: Նիկոլ Փաշինյանի քայլերը միտված են դրանց: Նա նաեւ փորձում է ցույց տալ, որ ինքը մասսայական է: Նա ամեն ինչ փորձում է օգտագործել իր օգտին»:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԹԱԹՈՅԱՆ-ՉԱԼԱԲՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈՒԽ ՉԻ ԳԱԼԻՍ

Ավետիք Չալաբյանի ղեկավարած «Հայաքվեի» ու Արման Թաթոյանի «Միասնության թեւեր» կուսակցության միջեւ քաղաքական համագործակցությունը հնարավոր է ավարտին չհասնի, եւ այս ուժերը համատեղ չմասնակցեն հունիսի 7-ին կայանալիք համապետական ընտրություններին: Դեռեւս մեկ ամիս առաջ այս երկու քաղաքական նախաձեռնությունները հայտարարեցին երկարատեւ քաղաքական համագործակցություն հաստատելու մասին, հուշագիր ստորագրեցին: «Պատրաստակամ ենք՝ մեկ ճակատով հանդես գալու առաջիկա համապետական ընտրություններում, հետեւաբար՝ միավորում ենք մեր ջանքերը եւ հայտարարում «Միասնության թեւեր» քաղաքական նախաձեռնության հետ երկարատեւ քաղաքական համագործակցություն հաստատելու եւ միասնաբար հանդես գալու մասին»,- հայտարարել էր «Հայաքվե» նախաձեռնությունը:

Ենթադրվում էր, որ մեկ-երկու ամսվա համագործակցությունը շարունակություն կունենա եւ կավարտվի նախընտրական դաշինքով, կամ առնվազն, ինչպես նշել էին, մեկ ճակատով ընտրություններին մասնակցելու հայտարարությամբ հանդես կգան, սակայն մեր աղբյուրներն ասում են, որ խոր տարաձայնություններ են ծագել այս ընթացքում երկու թիմերի եւ հատկապես նրանց ղեկավարների միջեւ՝ ինչպես մասնակցության ձեւաչափի, ռազմավարության, այնպես էլ ցուցակի ձեւավորման հարցերում, եւ հնարավոր է առաջիկայում հայտարարություն անեն համագործակցության ավարտի մասին:

Գուցե տարաձայնությունների պատճառը նաեւ այն է, որ, մեր տեղեկություններով, Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստան» կուսակցությունից առաջարկ է եղել Արման Թաթոյանին՝ միանալ իրենց թիմին: Մանավանդ, որ Թաթոյանի նախաձեռնության գաղափարական հիմքը համահունչ է Կարապետյանի առաջնորդած ուժի սկզբունքներին: Սակայն, որքանով մեզ հայտնի է, Արման Թաթոյանն այս առաջարկությանը դեռ չի պատասխանել, եւ հստակություն չկա, թե ինչ կլինի՝ դեռ բանակցությունների փուլը չի ավարտվել: Բայց կան տեղեկություններ, որ Թաթոյանը չնայած տատանվում է, սակայն հնարավոր է՝ մի կողմ դնի ամբիցիաները եւ հանուն մեծ նպատակի՝ իշխանափոխության, միանա «Ուժեղ Հայաստանին»:

«Հայաքվե» նախաձեռնության հանրային կապերի պատասխանատու **Դավիթ Սարգսյանը** երեկ մեզ վստահեցրեց, որ երկու թիմերի միջեւ ոչ թե տարաձայնություններ են առաջացել, այլ «նախընտրական դաշինքների կազմավորման սկզբունքների շուրջ քննարկումներ են ընթանում, որոնք դեռեւս շարունակվում են»: «Դեռեւս նոր բան չունենք ասելու մասնակցության ձեւաչափի մասին, առաջիկա օրերին կհստակեցնենք ու հայտարարություն կտարածենք»,- ասաց նա: Մեկ ճակատով ընտրություններին մասնակցելու հուշագրի ստորագրումից մեկ ամիս անց ինչ հարցերի շուրջ է, որ չեն կարողանում համաձայնության գալ: «Հարցեր կան, որոնք ավելի երկար քննարկում են պահանջում, այս պահին դեռ նորություն չունենք»,- հստակեցրեց մեր զրուցակիցը:

Սամվել Կարապետյանի հետ Արման Թաթոյանի հնարավոր համագործակցության մասին էլ ասաց, որ տեղյակ չէ. «Մեր նպատակն էր՝ խոշոր դաշինքով գնալ, բայց հարցեր կան, որ երկար քննարկում են պահանջում, ես կարծում եմ՝ առաջիկա օրերին հստակություն կլինի»: Եթե Թաթոյանի հետ համագործակցությունը ձախողվի, «Հայաքվեի» խորհուրդը կորոշի մասնակցել համապետական ընտրություններին եւ ինչ ֆորմատով:

Առհասարակ, ընդդիմադիր դաշտն արդեն բյուրեղանում է՝ առաջիկա ընտրությունների մասնակիցների սպեկտորն արդեն գծագրվում է: Երեկ «Ուժեղ Հայաստան» կուսակցության հետ դաշինքի ստեղծման վերաբերյալ հուշագիր ստորագրեցին «Նոր դարաշրջան» կուսակցության նախագահ, փաստաբան Հարություն Հարությունյանը եւ «Միավորված հայեր» կուսակցության պատվավոր նախագահ, լիազոր ներկայացուցիչ, տնտեսագետ Նաիրի Սարգսյանը: Հուշագիրը ստորագրած քաղաքական կուսակցությունները հայտարարեցին, որ միավորվում են «Ուժեղ Հայաստան» կուսակցության քաղաքական օրակարգի եւ նախընտրական ծրագրի շուրջ եւ գործելու են պետականության ամրապնդման, ազգային եւ հոգեւոր արժեքների պաշտպանության, արդյունավետ եւ հաշվետու կառավարման, տնտեսական կայուն զարգացման, իրավական եւ սոցիալական արդարության ու համերաշխության ապահովման սկզբունքների վրա: Նշվում է, որ ձեւավորվող դաշինքի գաղափարական հիմքը համահունչ է Սամվել Կարապետյանի առաջ քաշած ազգային-պետական եւ արժեքային մոտեցումներին, եւ կողմերը պատրաստակամություն են հայտնում՝ համախմբվել այդ գաղափարական հենքի շուրջ: Քաղաքական կուսակցությունները գալիք ընտրություններին կմասնակցեն միասնական քաղաքական դաշինքով՝ «Ուժեղ Հայաստան՝ Սամվել Կարապետյանի հետ»:

Հանրությանն անհայտ այս ուժերից «Նոր դարաշրջան» կուսակցության ղեկավար Հարություն Հարությունյանը մասնագիտությամբ իրավաբան է, Փաստաբանների պալատի անդամ, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ էր: Նա այս կուսակցության նախագահի ընտրվել բառացիորեն մի քանի օր առաջ: «Միավորված հայեր» կուսակցության պատվավոր նախագահ Նաիրի Սարգսյանը տնտեսագետ-իրավաբան է: «Ուժեղ Հայաստանի» հետ դաշինք կազմած այս կուսակցության ղեկավարը Ռուբեն Ավագյանն է: Նաիրի Սարգսյանը «Հայաստանը ես եմ» նախաձեռնության ղեկավարն է: Ի դեպ, «Միավորված հայեր» կուսակցությունը դեռեւս 2016-ին ակտիվորեն համագործակցում էր ՕԵԿ ղեկավար Արթուր Բաղդասարյանի հետ:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՈՉ ՄԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ, ՈՉ ՄԻ ՖՈՏՈ, ՈՉ ՄԻ ԱՊԱՑՈՒՅՑ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Մարտի 26-ին Ադրբեջանի նախագահը հրամանագիր ստորագրեց, ըստ որի՝ մարտի 31-ն Ադրբեջանում նշվելու է որպես ցեղասպանության օր: Ըստ Ալիեւի, որը պարբերաբար է այս մասին հայտարարում, մենք՝ հայերս, 1918 թվականին «ցեղասպանել» ենք ադրբեջանցիներին: Ադրբեջանի օմբուդսմեն Սաբինա Ալիեւան ցեղասպանության օրվա կապակցությամբ հայտարարություն է տարածել, որում կրկնելով Ալիեւի տեքստը՝ մանրամասն նկարագրում է, թե որ բնակավայրերում քանի ադրբեջանցի են հայերը սպանել: Ի դեպ, այդ վայրերի թվում է նաեւ Երեւանը:

Ադրբեջանի հարցերով փորձագետ, սոցիոլոգ **Արմինե Ադիբեկյանը**, որն ուսումնասիրել է Ալիեւի տարբեր տարիների պնդումները, ասում է, որ խոսքն այստեղ, իհարկե, ոչ թե պատմական իրողության, այլ շինծու «նարատիվի» մասին է, որի հիմնադիրը դեռ Հեյդար Ալիեւն է, եւ որը բավականին կասկածելի է: «Այո, նրանք պնդում են, որ 1918 թվականին նման իրադարձություններ տեղի են ունեցել, եւ այդ ֆոնի վրա Փաշինյանը հերքում է ցեղասպանությունը: Սա արձանագրված փաստ է»:

Այսինքն՝ սա առաջ է տարվում, որ հետո ասեն՝ դուք հրաժարվեք Հայոց ցեղասպանության ճանաչումից, մենք էլ սրանից կհրաժարվենք: «Ոչ, դուք հրաժարվեք ցեղասպանությունից, իսկ մենք կշարունակենք այս նարատիվը: Ամեն ինչ շատ հստակ է: Իսկ Փաշինյանն ասում է՝ մենք հրաժարվում ենք ցեղասպանությունից, իսկ դուք ինչ ուզում եք, այն էլ պնդեք, մենք ամեն ինչ կընդունենք»,- ասում է Արմինե Ադիբեկյանը:

Ադրբեջանցիները որպես ջարդեր հաճախ նշում են նաեւ 90-ականների իրադարձությունները, որ Ավշարում են եղել, Գուգարքում, Արարատյան դաշտավայրում են մի երկու գյուղ նշում: «Իրենք պարբերաբար թարմացնում են աշխարհագրությունը: Մի երեք մարդ է մահացել, անունը դնում են ցեղասպանություն: Իրականում, նրանք վավերագրության հետ խնդիր ունեն, փաստերով ամրապնդման, որովհետեւ ոչ մի փաստաթուղթ, ոչ մի ֆոտո, ոչ մի ապացույց գոյություն չունի: Ինչ-որ մեկը պատմում է, որ իր պապիկն իրեն պատմել է ինչ-որ բաներ: Ապացուցողական բազա նրանք չունեն, դա ապացուցելը բարդ է: Ասեմ ավելին՝ այդ նույն մարտի 31-ի՝ իբր ջարդերի ֆոտոներն իրականում 1905 թվականի հայերի ջարդերի լուսանկարներն են, այնտեղից են վերցված: Նա ինչ ուզում է խոսի, հարցը դա չէ, հարցն այն է, թե հայկական կողմն ինչպես է դրան արձագանքում, ինչ հակաքայլերի է պատրաստ գնալ: Մեր խնդիրը ոչ թե այն է, թե ինչ է Ալիեւը խոսում, այլ՝ թե մենք ինչ ենք անում այդ ուղղությամբ: Իսկ մենք, ավելի շուտ՝ սրանք, ոչինչ չեն անում»:

Ադրբեջանի գլխավոր արգումենտը Գուբայում 2007 թվականին հայտնաբերված զանգվածային գերեզմաններն են, որոնք ներկայացվում են որպես ցեղասպանության ուղիղ ապացույց: Ըստ Ադրբեջանի պաշտոնական վարկածի, սրանք 2018 թվականին հայերի կողմից սպանված ադրբեջանցիներն են, սակայն, նախ, չկա աճյունների միանշանակ թվագրում 2018 թվականով, եւ երկրորդը՝ հաստատված չէ այդ աճյունների էթնիկ պատկանելությունը: Կամ որեւէ երկիր, որն ընդունում է սա, լուրջ է վերաբերվում Ալիեւի այս պնդումներին կամ թեկուզ հավասարության նշան է դնում նրա այս «պատմվածքների» եւ Արցախում իրենց իրականացրած էթնիկ զտման հետ: «Ոչ, չկա որեւէ երկիր, որը սա ընդունում է, որովհետեւ նրանք շատ լուրջ խնդիրներ ունեն ակադեմիական ուսումնասիրությունների, գիտության հետ: Նրանք գիտնականներին այս թեմային մոտ չեն թողնում: Նրանք ֆինանսավորում են ինչ-որ «ալտերնատիվ» պատմաբանների, որոնք լեգալիզացնում են իրենց այս ցնդաբանությունները: Իսկ միջազգային ատյաններում ներկայացնելու համար պետք է լուրջ փաստագրական բազա լինի: Արդյունքում նրանք մնացել են սահմանափակված Ադրբեջան-Թուրքիա-Պակիստան շրջանակի մեջ: Բայց միջոցառումներ են կազմակերպում եւ Եվրոպայում, եւ Մերձավոր Արեւելքում: Նրանք չեն նստում ձեռքները ծալած: Գումարած սրան, հարցն այն է, թե որն է իրենց վերջնակետը՝ ուղղակի հայերին վարկաբեկելը, թե՞ ռեպարացիան, այսինքն՝ պատերազմական տուգանքներն ու փոխհատուցումները»:

Բնականաբար, ոչ մի նորմալ մարդ չի կարող ընդունել, որ, օրինակ, Երեւանում կամ թեկուզ մի գյուղում հայերը մորթել են հարյուրավոր ադրբեջանցիների: Եվ, ուրեմն, ո՞րն է ադրբեջանական նարատիվների, այս ցնդաբանության վտանգը: «Պատկերացրու, դու, քո տանը նստած, քեզ պատմում են, որ Աֆրիկայում ինչ-որ մի ցեղ ցեղասպանել են: Նախ, քեզ հետաքրքիր չէ այդ ցեղի ճակատագիրը, եւ երկրորդ՝ դու ունես ինչ-որ տնտեսական շահեր ցեղասպանողի կամ ցեղասպանվածի հետ, ըստ կոնյունկտուրայի, եւ դու հրապարակվածին հավատով ես վերաբերվում եւ դրա հիման վրա կոնֆլիկտի մասնակիցների նկատմամբ քո քաղաքականությունն ես ձեւավորում: Այս իմաստով, այո, կան վտանգներ, բայց գլոբալ առումով նրանք թքած ունեն, թե դու ինչ ես մտածում այս ամենի մասին, եթե դրանից չեն բխում լուրջ հետեւանքներ, ռեպարացիա, տարածքային զիջումներ, օրինակ»,- ասում է Արմինե Ադիբեկյանը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆԸ 26 ԹՎԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ ՈՒԶՈՒՄ Է 18 ԹՎԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՏԵՍՆԵԼ

ՔԱՐՈԶ

Շաբաթ-կիրակի օրերին Նիկոլ Փաշինյանը փորձեց ջնջել նախորդ շաբաթվա դառնահամը, որը մնացել էր արցախցի Արմինե Մոսիյանի հետ լեզվակռվից հետո: Այս անգամ վարչապետին «պատահաբար» հանդիպող երեւանցիները շատ ավելի բարի էին նրա հանդեպ, բարեւն անմիջապես առնում էին, խոսում միայն իրենց սոցիալական կարիքներից, հաճույքով համաձայնում էին նվեր-քարտեզներն ընդունել: Մի

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

անկեղծ բան ասեմ. ես բացարձակ կապ չունեմ քաղաքականության հետ, բայց կարծում եմ, որ այս մանր խոսակցությունները Ձեզ հարիր չեն, մեծ են Ձեր մասշտաբները, էսքան ներքեւ իջնել Ձեզ չի կարելի»: Ու փորձեց բացատրել, որ Փաշինյանը պետք է քիթ սրբելու ժամանակ չունենար, ոչ թե այսքան զվռներ փողոցներով, անգամ իրեն՝ սովորական բժշկուհուն ժամանակը չի հերիքում գործերի համար: Մեր ժողովուրդը սովոր է, որ երկրի ղեկավարը պետք է սոլիդ լինի, լրջմիտ, ծանրակշիռ պահվածք ունենա, ու, ի դեմս բժշկուհու, դաս է տալիս Փաշինյանին: Բայց պացիենտը չի հասկանում: Գետնին նայելով, ծիծաղում է. «Ներքեւ՝ ո՞ւր, որտե՞ղ եմ իջել»:

Մեծ հաշվով, այդ միջադեպերը չէին խաթարում վարչապետի հրճվանքը, ու էսպես անհոգ եւ ուրախ էլ կանցներ կիրակին, եթե Փաշինյանը հանկարծ չորոշեր գնալ Սուրբ Աննա եկեղեցի՝ պատարագին մասնակցելու: Եկեղեցում հնչեց Վեհափառ հայրապետի անունը, եւ Նիկոլը թիմով կիսատ թողեց պատարագը, ողջ շքախմբով ճեղքեց հավատացյալ ժողովրդի շարքերը, կին նույնիսկ խնդրեց իր աղջկան այդ քարտեզից նվիրել, քանի որ վերջինս չի կարողանում մայրանալ: Եվ Նիկոլն ասաց՝ «շատ լավ», ու նվիրեց:

Մեկ-երկու միջադեպ եղան, իհարկե:

Մի ֆեյք տիկին շնորհակալություն հայտնեց Փաշինյանին ու ներկայացավ որպես նախկին ռազմագերի Սուջյան Գեւորգի հորաքույր, իսկ Գեւորգ Սուջյանը հայտարարեց, որ տիկինն իր հորաքույրը չէ՝ նրան չի էլ ճանաչում:

Մի բժշկուհի էլ Փաշինյանին փորձեց դաս տալ. «Կներեք, էլի, ազնիվ, հոսանքին ընդառաջ, թեեւ ի սկզբանե պարզ էր, որ Սուրբ Աննայում պատարագի ժամանակ Վեհափառի անունը չի զեղչվելու, ինչպես չէր զեղչվել նաեւ Գեղարքունիքում, վարչապետի այցի մասին էլ նախապես չէին տեղեկացրել:

Հենց այդ ժամանակ էլ Երեւանով մեկ լուր տարածվեց, թե մի քաղաքացի եկեղեցում չի դիմացել ու փորձել է խփել Փաշինյանի գլխին: Թե քանի մարդու սիրտ հովացավ, այդ մասին պատմությունը լռում է, բայց հազարավոր երեւանցիներ իրենց գցեցին սոցցանցերը, որ տեսնեն, թե ոնց են հարվածում Փաշինյանին: Այդպես էլ չտեսան: Քաղաքացու ձեռքը պլաստաց ու անօգնական կախվեց օդում՝ չկպչելով Նիկոլի գլխին: Այդպես երեխաները մեր մանկության տարիներին «Տըըըզ» խաղն էին խաղում, կտտացնում կամ թեթեւ հարվածում էին մեջքով կանգնածի գլխին, որը պետք է գուշակեր, թե ով էր խփողը: Գուշակողն այս դեպքում Քննչական կոմիտեն է, որը միանգամից երեք հոգու՝ եղբայրներ Դավիթ եւ Միքայել Մինասյաններին եւ ազատամարտիկ Գեւորգ Գեւորգյանին, որը համարձակվել էր թարս նայել Փաշինյանին, մեղադրանքներ առաջադրեց՝ խուլիգանության եւ պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու հոդվածներով: Գեւորգյանի շշպռող հայացքը տիրաժավորվեց սոցցանցերում, իսկ Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրությունից հասկացանք վերջապես, թե ինչ էր անում Փաշինյանը Սուրբ Աննայում: Փաստորեն, խցկվելով հավատացյալ ժողովրդի մեջ, նա «քաղաքական գործունեություն» էր իրականացնում՝ սադրելով ու պատարագը հարամ անելով:

Եթե սա քաղտեխնոլոգիա է, որի նպատակը հանրությանն իր անձով զբաղեցնելն է, ապա հազիվ թե նման մեթոդներով ՔՊ-ի ձայներն ավելանան, այդ դեպքում ի՞նչ է ուզում Նիկոլը: «Չեմ կարող ասել, թե իր գլխում ինչ է կատարվում: Ինձ ավելի շատ թվում է, թե նա այլեւս ադեկվատ չէ իրականությանը ու նաեւ որոշակի պանիկա ունի, եւ նրա քայլերը տրամաբանական չեն: Նա ուզում է ժողովրդի մեջ մտնել, ինչպես 18 թվականին, բայց նրա մոտ չի ստացվում: Աննան էլ կողքը չէ, որ խորհուրդներ տա»,- ասում է քաղաքագետ **Ստեփան Դանիելյանը**: Այլ կերպ ասած՝ Փաշինյանը 26 թվականի ժողովրդի մեջ ուզում է 18 թվականի ժողովրդին ճանաչել, ու չի ստացվում:

Քաղաքագետ **Երվանդ Բոզոյանի** կարծիքը հակառակն է: Նա կարծում է, որ Փաշինյանը մտածված է գնում սադրանքների, սկանդալներ հրահրում, որովհետեւ դրանք ապահովում են աղմուկ եւ քննարկում իր շուրջ: «Հայտնի ռուսական ասացվածք կա՝ «Бояре плохие, царь хороший», ու հասարակության մեջ էլ բոլոր ժամանակներում կա մի շերտ, որն այդպես է կարծում: Քանի որ Փաշինյանի վարկանիշն անկում է ապրել, նա կարծում է, թե դրա պատճառը ոչ թե ինքն է, այլ՝ իր թիմը, որը վատ է աշխատում: Նա անկեղծ որոշել է շփվել ժողովրդի հետ: Գնում է մարզեր, գյուղացիների հետ է հանդիպում, քաղաքների բնակիչների եւ այդ ամենն անում է մաքսիմալ աղմկահարույց, որ աղմուկն իրեն միշտ հասարակ մարդու ուշադրության կենտրոնում պահի: Եկեղեցին այն տեղն է, որտեղ բազմաթիվ մարդիկ են հավաքված: Նա մտավ եկեղեցի, որպեսզի աղմուկ լինի, որն ապահովեց քննարկում իր շուրջ: Իսկ երբ կա քննարկում, հասարակության մեջ միշտ ինչ-որ շերտ է լինելու, որն իրեն է պաշտպանում, եւ մի շերտ, որն իրեն դեմ է: Այս սադրանքները կազմակերպելով, Փաշինյանը փորձում է կոնսոլիդացնել այն զանգվածը, որն իր կողքին է, որովհետեւ իր թիմը կամաց-կամաց կոռոզիայի է ենթարկվում, կրիստալիզացված զանգվածը շատ փոքր է: Որպեսզի նա կարողանա իր տակից փախած զանգվածը կրկին վերականգնել, պետք է աղմկահարույց քայլերի գնա, ինչն էլ անում է»,- ասում է քաղաքագետը:

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԱՅԳԵՁՈՐԻ ԿԱՄՈՒՐՋԸ ՎԹԱՐԱՅԻՆ Է ԴԱՐՁԵԼ՝ ՓԱԿՎԵԼ

Մարտի 28-ին Բերդ համայնքի սահմանամերձ Այգեձոր գյուղից ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Այգեձորում վնասվել է Խնձորուտ գետի կամուրջը: Այգեձոր համայնքի երկարամյա ղեկավար, 2017 թվականից Այգեձոր բնակավայրի վարչական ղեկավար Լորիս Միրզոյանը մեզ հայտնեց, որ կամրջի երկու կողմում գտնվող պատվարները վնասվել են: Կամուրջը չի փլուզվել, սակայն դրանով տրանսպորտային միջոցների երթեւեկը դադարեցվել է, կամուրջը փակվել է փրկարար ծառայության ժապավեններով:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Սահմանամերձ գյուղի բնակիչները մտահոգված են, քանզի կամուրջը կարեւոր նշանակություն ունի: Այգեձորի վարչական ղեկավարն ասաց, որ վթարային դարձած կամրջով Այգեձոր եւ Չինարի գյուղերի բնակիչները գնում են իրենց հողատարածքներ: Բացի այդ, կամուրջն Այգեձորում գործող պահածոների «Էկո Գարդեն» գործարան տանող ճանապարհին է: Բնակիչները հույս ունեն, որ Խնձորուտ գետում ջրի մակարդակն իջնելուց հետո կամուրջը կրկին կբացվի, ու այն կրկին կշահագործվի տրանսպորտային միջոցների կողմից: Լ. Միրզոյանը հայտնեց, որ ներկայում հետիոտներն օգտվում են վթարային կամրջից, սակայն գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկից հետո, երբ դաշտերում հողի մշակության աշխատանքներ արվեն, կամրջի վերականգնման գործը հրատապ է դառնալու: Վթարային կամրջին այլընտրանքային ճանապարհ չկա, որ Այգեձորի եւ Չինարիի բնակիչներն օգտվեն: Իսկ եղանակից սպասումները լավատեսություն չեն ներշնչում: Առաջիկա օրերին Հայաստանի տարածքում անձրեւները շարունակվելու են, որի հետեւանքով Խնձորուտը կարող է ավելի վարարել, կամուրջը քանդել: Ջերմաստիճանի բարձրացման հետեւանքով սարերում կուտակված ձյունը սկսել է հալվել, եւ առաջացած առվակները միանալով իրար՝ իրենց ճանապարհին ամեն ինչ ավերող մի հսկա գետ են դառնում: Լ. Միրզոյանն ասաց, որ ինքը կամրջի վթարային դառնալու մասին հայտնել է Բերդի համայնքապետարան եւ Ազգային անվտանգության ծառայություն: Բերդի համայնքապետարանի եւ Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքերում որեւէ տեղեկատվություն չկա Այգեձորի կամրջի վթարային դառնալու վերաբերյալ: Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում, սակայն, բազում տեղեկություններ կան մարզպետ Հայկ Ղալումյանի՝ Բերդ համայնք կատարած այցերի, այնտեղ հիմնախնդիրների քննարկման վերաբերյալ: Օրինակ, հայտնում են, որ մարտի 10-ին Հ. Ղալումյանն աշխատանքային այց է կատարել Բերդ համայնք, որի ընթացքում «մարզպետը նախ այցելել է Հախում գետի վրա կառուցվող կամրջի շինհրապարակ, տեղում ծանոթացել է կատարվող աշխատանքներին եւ ընթացիկ փուլին:

Մարտի 17-ին մարզպետ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Հախում գետի կամուրջն ո՞ւմ ֆինանսավորմամբ է կառուցվում, որքա՞ն է ծրագրի արժեքը, ո՞րն է կապալառու կազմակերպությունը, ե՞րբ են մեկնարկել աշխատանքները, ե՞րբ է ծրագրի ավարտը»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Հախում գետի կամուրջը կառուցվում է Ճանապարհային դեպարտամենտի պատվիրարկմամբ: Վերոհիշյալ պետական շինարարությունների վերաբերյալ շինարարական կազմակերպությունների եւ պայմանագրային արժեքների տեղեկատվությունը կարող է տրամադրվել տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից»:

Մարզպետն Իջեւանից մեկնել է Բերդ համայնք, Հախում գետի վրա կառուցվող շինհրապարակում ծանոթացել է աշխատանքների ընթացքին, սակայն չգիտի կամ չի ցանկացել հայտնել կամրջի շինարարության հետ կապված կարեւոր մանրամասներ: Ուրեմն՝ ի՞նչ վստահություն կա, որ գործի նկատմամբ նման վերաբերմունք ունեցող մարզպետի գործուն միջնորդությամբ Այգեձորի կամուրջն արագ կվերականգնվի: Հավելեմ, որ 2024 թ. մայիսի 27-ին վարարած Աղստեւ գետը Դիլիջան-Իջեւան հատվածի 10 տեղամասում քանդել է միջպետական ավտոճանապարհի եզրերը, սակայն անցած 2 տարում դրանք դեռ չեն վերանորոգվել:

ԻՄՈՒՆԻՆ

ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՃԱՄԲԱՐ, ԹԵ՞Ղ ԳԵՏՏՈ. ՍԱՔՈՒՆՑԸ ՎԵՐԱԿԱՑՈՒԻ ՊԱՇՏՈՆ Է ՈՒՂՈՒՄ

Փաշինյանի իշխանությունը վտանգի տակ է, հայ հասարակության ճնշող մեծամասնությունը մերժում է նրան, սպասում է առաջիկա ընտրություններին՝ նրանից ազատվելու համար: Փաշինյանի իշխանությանը կցված տարբեր քաղաքական եւ, այսպես կոչված, հասարակական գործիչներ խուճապի մեջ են, նրանք հասկանում են, որ Փաշինյանի իշխանության վախճանով ավարտվելու է նաեւ իրենց գործունեությունը, եւ փորձում են իրավիճակը փրկելու ուղիներ առաջարկել, որ եւ Փաշինյանը փրկվի, եւ իրենք: Նախկին երանելի ժամանակներին վերադառնալն անհնար է՝ ԱՄՆ իշխանությունն այլեւս չի ցանկանում պահել իրենց բուծած քաղհասարակությանը, Եվրամիությունն ինքն է ֆինանսական խնդիրների առաջ եւ էապես պակասեցրել է աջակցությունը: Խեղդվողներն իրենք պետք է մտածեն իրենց փրկության մասին:

Արթուր Սաքունցը, որը ղեկավարում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, ներկայացրել է «Արտաքին ազդեցության դեմ պայքարի քաղաքականության համառոտագիր» անունով զբաղված՝ շեղել չի կարելի: «2026 թ. հունիսի ընտրություններից առաջ եւ դրանից հետո Հայաստանի դիմադրողականությունը արտաքին ազդեցության գործողություններին ամրապնդելու համար այս քաղաքականության համառոտագիրն առաջարկում է գործնական միջոցառումներ՝ ինստիտուցիոնալ պատրաստվածությունը բարելավելու, իրավական պաշտպանությունն ամրապնդելու եւ քաղաքացիական հասարակության ու միջազգային գործընկերների հետ համագործակցությունը բարելավելու համար»: 16 էջից կազմված փաստաթղթում բազմաթիվ պնդումներ կան այն մասին, որ Ռուսաստանը, ՌԴ իշխանությունները եւ հատուկ ծառայությունները փորձում են միջամտել Հայաստանի ընտրություններին եւ այստեղ նշանակել իրենց դրածոյին, բայց ոչ մի ապացույց, թե ինչպես է դա դրսեւորվում, բացի հղումներն ինչ-որ զեկույցներին, մամուլի հրապարակումներին: Կա հղում Հայաստանի արտաքին հետախուզության ծառայության զեկույցին, ըստ որի՝ Ռուսաստանը պատրաստվում է 80 հազար մարդ ուղարկել՝ ընտրություններին մասնակցելու, բայց այդ պնդումը եւս որեւէ ապացույցով ամրապնդված չէ:

«Ուժեղ Հայաստան» կուսակցության ղեկավար Սամվել Կարապետյանը ներկայացվում է որպես ռուսական ազդեցության գործակալ: Ըստ զեկույցի հեղինակների՝ այդ փաստն ակնհայտ էր «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի շուրջ ծավալված իրադարձություններից: «Ընկերությունը պատկանում է ռուս-հայ միլիարդատեր եւ Վլադիմիր Պուտինի գործընկեր Սամվել Կարապետյանին, որին վարչապետ Նիկոլ Փաշինյանը մեղադրել է հասարակական դժգոհություն առաջացնելու համար էլեկտրաէներգիայի անջատումներ կազմակերպելու մեջ, ինչը կառավարությանը դրդել է ազգայնացնել ընկերությունը»,- գրում է Սաքունցը: Այս բոլոր պնդումներն իրականության հետ որեւէ աղերս չունեն. նախ որեւէ կերպ ապացուցված չէ, որ ՀԷՑ-ը միտումնավոր է էլեկտրաէներգիայի անջատումներ կազմակերպել, երբ դրա կառավարումն իրականացնում էր «Տաշիր» ընկերությունը, քանի որ անջատումներ իրականացվում են նաեւ ՀԷՑ-ն իշխանության հսկողության տակ վերցնելուց հետո, գուցե՝ ավելի հաճախ, եւ այդ տրամաբանությամբ ստացվում է, որ իշխանությունն ինքն է իր դեմ դժգոհություն հրահրում: Որեւէ ապացույց չկա, որ Կարապետյանը ՌԴ նախագահի գործընկերն է, փայատերը կամ մտերիմը:

Ապրիորի պնդում կա, ըստ որի, Ռուսաստանի հետ կապված քրեական տարրերը ֆինանսական շանտաժի են ենթարկում Վրաստանում բնակվող հայերին, որ նրանք եւս ընտրություններին մասնակցեն եւ քվեարկեն հօգուտ ընդդիմության: Եթե Ռուսաստանի դեպքում այս պնդումը գոնե տեսական հիմք կարող է ունենալ՝ Ռուսաստանում ապրում են հարյուր հազարավոր ՀՀ քաղաքացիներ, ապա Վրաստանի հայերն ունեն Վրաստանի քաղաքացիություն, իսկ նրանք, ովքեր ունեն ՀՀ քաղաքացիություն եւ կարող են քվեարկել, այնքան փոքրաթիվ են, որ որեւէ ազդեցություն չեն կարող ունենալ Հայաստանի ընտրության արդյունքների վրա: Այս բոլոր պնդումները մի նպատակ են հետապնդում՝ Հայաստանը մեկուսացնել Ռուսաստանից եւ Վրաստանից ու գցել անմիջական կախվածության մեջ Ադրբեջանից եւ Թուրքիայից:

Փորձելով կարեւորել սեփական դերը եւ ինչ-որ գործառույթ վերապահել իրենց՝ զեկույցի հեղինակը գրում է. «Հայաստանի քաղաքացիական հասարակությունն ունի վերլուծական կարողություններ, հետաքննչական փորձագիտություն եւ համայնքային վստահություն: Կառուցվածքային երկխոսության հարթակները թույլ կտան անվտանգ տեղեկատվության փոխանակում պետական հաստատությունների եւ հավաստի ՔՀԿ-ների միջեւ: Պատշաճ կերպով պաշտպանվելու դեպքում ՔՀԿ-ների կողմից ստեղծված վերլուծությունը կարող է ամրապնդել դատախազական գործերը եւ բարելավել համակարգված միջամտության վաղ հայտնաբերումը»: Սաքունցը քաղհասարակությանը բաժանում է 2 մասի. վստահելի եւ ոչ վստահելի, վստահելին, բնականաբար, իրենք են, այն կազմակերպությունները, որոնք ստեղծվել են արեւմտյան գրանտներով եւ աշխատում են հօգուտ իշխանության: Անվստահելին նրանք են, որոնք գործում են ինքնուրույն եւ պաշտպանում են հանրային շահը: Սաքունցն առաջարկում է «վստահելի ՔՀԿ-ին» տալ վերակացուի լիազորություն, որ նրանք կարողանան դատախազությանը գործ տալ այն անձանց կամ կազմակերպությունների դեմ, որոնք, իրենց կարծիքով, ենթակա են արտաքին միջամտության:

Փաստաթղթում առաջարկվում է քրեականացնել գաղտնի միջամտության գործողությունները. «Քրեական օրենսգիրքը պետք է սահմանի եւ քրեականացնի արտաքին ուղղորդմամբ քաղաքական միջամտության նեղ մասնագիտացված ձեւերը՝ ներառյալ օտարերկրյա պետության անունից գիտակցաբար գործելը՝ քաղաքական գործընթացներին գաղտնի ազդելու համար՝ առանց բացահայտման: • Քաղաքական գործիչների կամ քարոզարշավի կառույցների համակարգված արտաքին ֆինանսավորում»:

Ըստ էության, սրանք ուզում են Հայաստանը վերածել մի հսկայական համակենտրոնացման ճամբարի, մեկուսացնել աշխարհից, իրենք էլ դառնան այդ համակենտրոնացման ճամբարի վերակացուները, իսկ ցանկացած մեկը, ով կհամարձակվի հակադրվել իրենց կամ վիճարկել իրենց իշխանությունը՝ հռչակել արտաքին ուժի թելադրանքով եւ պատվերով գործող ու ճամբարից միանգամից տեղափոխել պատժախուց՝ այնտեղից դուրս չգալու պայմանով: Իրենք միայնակ այս ծրագիրը չեն կարող իրականացնել, անհրաժեշտ է գործընկերների՝ ԵՄ-ի աջակցությունը: Ինչ խոսք, վատ պլան չէ, միայն թե կյանքի կոչվելու ոչ մի հնարավորություն չունի:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԵՏՀԱՇՎԱՐԿՆ ՍԿՍՎԱԾ Է. «ՃԱՆՃԵՐԸ՝ ԱՌԱՆՁԻՆ, ԿՈՏԼԵՏՆԵՐԸ՝ ԱՌԱՆՁԻՆ»

Այն, որ հայաստանյան ներկայիս իշխանությունները՝ հանձին առաջին դեմքերի, խփել են ցինիզմի, ամբարտավանության, սանձարձակության բոլոր ռեկորդները, վաղուց նորություն չէ: Եվ սա ոչ թե զգացմունքային արձանագրում է, այլ 8-ամյա տխուր վավերագրություն: Ծեծել, քարշ տալ, անարգել, բանտ նստեցնել զոհված կամ անհետ կորած հերոսների հարազատներին, առավոտյան բոլորին սեր խոստովանել ու սրտիկ ցույց տալ, դրանից քիչ անց մետրոյում բղավել զոհված հերոսի դստեր վրա եւ մեղադրել Արցախից «փախնելու» մեջ: Ժողովրդին ահաբեկել՝ եթե իրենց չընտրեն, աղետաբեր պատերազմ կլինի, Վեհափառ հայրապետին հալածել, նրա դեմ կատաղի արշավ մղել եւ մեծ թիկնազորով սադրիչ այց կատարել նրա երեւանյան աթոռանիստ տաճար՝ Սուրբ Աննա կաթողիկե եկեղեցի, լավ գիտակցելով, որ ՀԱԵ իրական հավատավոր զավակները չեն հանդուրժի իրեն: Ապա պատարագին ներկա մարդկանց բրթբրթել՝ մոտենալ խորանին, հրահրել եւ երիտասարդների ձերբակալել (Բաքվում, ի դեպ, շատ էին «նեղվել», որ իրենց Փաշինյանին բան ասող է եղել):

Կառավարության օթյակի հայտնի ներկայացուցիչներից մեկն էլ շտապում է բարբաջել, թե «ընդդիմություն, արյուն չի թափվելու, ձեր մուրազը ձեր փորը կմնա»: Եվ սա ասում են այն իշխանությունները, որոնք հազարավոր հայորդիների տարել են պատերազմական մսաղացի, դատարկել ու հանձնել են Արցախը, վարչապետի ավտոշարասյունը վրաերթի է ենթարկել 8 ամսվա հղի երիտասարդ կնոջը, բանտերը լցրել են տասնյակ քաղբանտարկյալներով եւ նրանցից մեկին՝ Արմեն Գրիգորյանին մահվան հասցրել հենց դատավարության ժամանակ:

«Ես եմ կառավարությունը» կամ՝ «Եթե ես վարչապետ չլինեմ, Հայաստանը վարչապետ չի ունենա» ոճով հիմա էլ իր նախկին գործընկերներին՝ լրագրողներին է սպառնում, որ «եթե ես վարչապետ չլինեմ, դուք լրագրող չեք աշխատի» եւ այլն, ու հետապնդում է իրեն քննադատել հանդգնած լրատվամիջոցներին, լրագրողներին, խմբագիրներին, շինծու քրեական գործեր «կարում» եւ այլն:

Օրենսդիր մարմնի ղեկավարն էլ փողոցում սեռական հայհոյանքներ է տեղում իրեն մոտեցած քաղաքացու հասցեին ու բռնել տալիս: Եվ, ի դեպ, ո՛չ առաջին ու, վախենամ՝ ո՛չ վերջին անգամ: Մյուս մանր ու միջին տրամաչափի իշխանիկներով լկտիաբար անարգել Հայ եկեղեցին, Ամենայն հայոց կաթողիկոսին եւ մյուս հոգեւոր բարձրաստիճան այրերին, նրանց շինծու մեղադրանքներով կալանավորել, պիտակավորել: Հայհոյել, սպառնալ ընդդիմախոսներին, այլախոհներին եւ, այդ ամենով հանդերձ, «ուրախ ավտոբուսով» անհոգ զխտվել, երգել, պարել, կատակել, մարզային վոյաժներ անել եւ այլն:

Սա, ինչպես ասում են, վտանգավոր ու ազգակործան այսբերգի վերին շերտն է միայն: Դեռ չեմ խոսում ազգադավ ու աղետաբեր զիջումների մասին, հակահայկական խոսույթի մասին: Շարքը շարունակելի է:

Հայտնի ասացվածք կա. «Ճանճերը՝ առանձին, կոտլետները՝ առանձին»: Եկել ու դեռ մի բան էլ ուշացել է ժամանակը, որ իրենց խաղաղության աղավնի հորջորջող, ընդդիմախոսներին գիշատիչ ներկայացնող, բայց իրականում բարոյազուրկ ու ինքնասիրահարված այս միալար տզզացող ճանճերին հեռացնենք կոտլետներից, ժողովրդից, մեր արժանապատվության վերջին տարածքից՝ այս սրտաչափ Հայաստանից: Իսկ դրա համար, հավատացեք, ժամանակ ու հնարավորություն դեռ կան:

Արա ԱԼՈՅԱՆ

ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԽԱՆԳԱՐԵԼ ԻՆՁ, ԲԱՅՑ ԴԱ ԻՐԵՆՑ ՉԻ ՀԱՋՈՂՎԵԼՈՒ

Գրող, սցենարիստ, ռեժիսոր Տիգրան Պասկեւիչյանը Ֆեյսբուքի իր էջում գրել է.

«Ողորմելի հանրային հեռուստաընկերությունը, որն արդեն հինգուկես տարի բանտել ու չի ցուցադրում իմ «Անկախության մեր ճանապարհը» ֆիլմը, դատարանով բացառեց դրա ցուցադրության որեւէ ձեւաչափ, այդ թվում՝ դահլիճային դիտումները: Որքան պետք է ատես սեփական երկրիդ պատմությունն ու ձեռքբերումները, որ գնաս նման մանր քայլի: Երբ ասում եմ՝ հանրային հեռուստաընկերություն, իհարկե՝ նկատի չունեմ մանրապճեղ չինովնիկներին, ահարկու ատիչը նրանց վերեւում է, ահարկու ատիչը նա է, ով պատմություն, սրբություն, արժեք է ասպատակում արդեն բավական երկար (անտանելի երկար) ժամանակ: Այսուհանդերձ, հուսահատ չեմ: Ապրածս կյանքն ու ժամանակն ինձ սովորեցրել են, որ մանրապճեղները, նաեւ՝ խոշոր եղջյուրավորները հասնում են վախճանի նշանակված վայրին... Ֆիլմը շուտով եթեր է գնալու, երբ մենք ձեզ հետ նշանակված վայր ուղարկած կլինենք մանրախնդիր ու կեղծապաշտ իշխանություններին: Այս պատմության մեջ մի բան կարող էր ինձ վրդովեցնել: Այն, որ դատարանի վճիռը պարտավորեցնում է վճարել 40000 դրամ: Բայց, ասեմ, ես դրան հանգիստ եմ վերաբերվում, որովհետեւ մանկուց ինձ սովորեցրել են ողորմած լինել:

Ուրեմն՝ համարում եմ, որ 40000 դրամ մուծելով, ես ողորմություն եմ տալիս Արա Շիրինյանին (ՀՀԽ նախկին նախագահ), Վասակ Դարբինյանին (ՀՀԽ ներկա նախագահ), Արամազդ Ղալամքարյանին (Զրային կոմիտեի նախագահ), Դավիթ Կարապետյանին (ՀՀ ԱԳՆ գլխավոր քարտուղար)... Ու վերջում հաստատ ձեզ հետաքրքրում է, թե ինչ եմ անելու հետո: Ասեմ, թող պինդ բռնվեն ողորմելիները, ինչպես նախկինում, ապագայում եւս ցուցադրելու եմ՝ ամենատարբեր ձեւաչափերով: Թող բանուգործ թողած՝ հետեւեն ու կրկին հայցեր ներկայացնեն, ես պատրաստ եմ նոր ողորմություններ բաշխելու»: Զրուցել ենք **Տիգրան Պասկեւիչյանի** հետ:

- «Անկախության մեր ճանապարհը» ֆիլմը փաստացի արգելել են ցուցադրել անգամ փոքր դահլիճներում: Գուցե ֆիլմում ադրբեջանցիների հասցեին քննադատական խոսք կա, դրանից են ցնցումների մեջ ընկել հայտնի շրջանակները, որոնք այժմ արդեն նաեւ ֆիլմերի գրաքննությամբ են զբաղվում:

- Ադրբեջանին ուղղված որեւէ քննադատական խոսք չկա: Այն կոչվում է «Անկախության մեր ճանապարհը» եւ պատմում է 1988 թվականից մինչեւ 1991-ի սեպտեմբերի 21-ը քաղաքական իրադարձությունների մասին: Ֆիլմում ներկայացվում են այն բոլոր քայլերը, որոնք Հայաստանն արել է եւ քայլել է դեպի մինչեւ անկախություն: Որեւէ խոսք չկա ադրբեջանցիների մասին, սակայն խոսվում է, օրինակ, Ղարաբաղի հարցի մասին: Ղարաբաղյան շարժման մասին ֆիլմում բա ուրիշ ինչի՞ մասին պետք է խոսվեր: Պարզ է, որ պետք է խոսվեր հենց Լեռնային Ղարաբաղի մասին:

- Այսինքն՝ արգելքի պատճառն այն է, որ ֆիլմը Ղարաբաղի մասին է: Նիկոլ Փաշինյանը վերջերս հայտարարեց՝ Արցախի մասին խոսելը նշանակում է պատերազմի կոչ անել եւ հրահրել....

- Ֆիլմն արգելում են ցուցադրել որեւէ այլ տեղում: 2020 թվականից ես այն վերջացրել եւ հանձնել եմ Հանրային հեռուստաընկերությանը: Այն նկարել եմ հենց իրենց պատվերով, իրենք վճարել են ֆիլմի համար: 2020 թվականի դեկտեմբերից մինչ այս պահը ֆիլմը չի ցուցադրվել, որեւէ տեղ այն չեն տեղադրել: Հետո «Առավոտ» օրաթերթում ինչ-որ հոդված են տեսել, որ ես ՄԱԿ-ի գրասենյակում ցուցադրություն եմ արել երիտասարդների համար, եւ դրա հիման վրա պնդում են, որ ես պայմանագրի խախտում եմ թույլ տվել: Դիմել են դատարան, ինձ ասում են՝ իրավունք չունեի այն որեւէ տեղ ցուցադրելու, ես էլ ասում եմ՝ ես ոչ միայն այդ մեկ օրն եմ ֆիլմը ցուցադրել, այլեւ դրանից առաջ՝ շատ անգամներ: Դա իմ հեղինակային իրավունքն է, եւ ես ունեմ դրա իրավունքը առնվազն՝ փոքր տարածքներում: Դիմեցին դատարան, եւ դատարանը, բնականաբար, ինչ պետք է աներ՝ Հայաստանի նման երկրում, որտեղ չկա անկախ դատական համակարգ.... վճռեց, որ ինձ արգելում են անգամ փոքր դահլիճներում այն ցուցադրել:

- Դեմոկրատական երկրում ո՞վ եւ ինչ իրավունք ունի արգելել ռեժիսորին՝ ֆիլմ ցուցադրել:

- Իրենք վճարել են եւ համարում են, որ դա իրենց սեփականությունն է: Ֆիլմին մոտենում են որպես գույքի, իրենց համար դա ֆիլմ չէ, օրինակ՝ կահույք է, կենցաղային տեխնիկա է, աթոռ է.... ես աթոռ եմ արտադրել իրենց համար, երեւի, իրենք էլ ասում են՝ դա մեր աթոռն է:

- Որքա՞ն գումար են վճարել ֆիլմի համար:

- 4 մլն 240 հազար դրամ գումարի մասին է խոսքը:

- Այժմ, ենթադրենք, եթե Դուք ցանկանաք այդ գումարը վերադարձնել իրենց, չե՞ք կարող ֆիլմի հեղինակային իրավունքը ստանալ:

- Արել ենք նման առաջարկ՝ բանավոր, սակայն իրենց կողմից դա չի ընդունվել: «Անտարես» հրատարակչության տնօրեն Արմեն Մարտիրոսյանը Հ1-ի գործադիր տնօրենին տեղեկացրել է, որ մենք պատրաստ ենք վճարել այդ գումարը եւ հետ վերցնել ֆիլմը, սակայն նշել են, որ կմտածեն, ու այդպես էլ ոչ մի պատասխան մինչ օրս չեն տվել: Առհասարակ, ես էլ եմ դիմել տարբեր առաջարկներով՝ գրավոր եղանակով, սակայն չեն արձագանքել: Նրանք չունեն որեւէ խելամիտ պատճառաբանություն, թե ինչու այդ ֆիլմը չեն ցուցադրում:

- Ի վերջո՝ ինչո՞ւ ցույց չեն տալիս, ես իմ կարծիքն ասացի՝ հավանաբար, Ղարաբաղի մասին է, սակայն Դուք չասացիք:

- Ցույց չեն տալիս, որովհետեւ այս երկրում միայն մեկ հոգի է որոշում, թե պատմությունը որտեղից է սկսվում, դրա համար էլ բոլորն այդ մեկին են ենթարկվում:

- Իսկ 40 հազար դրամ դատական ծախսերը պատրաստվո՞ւմ եք վճարել:

- Դատական ծախսեր են դրանք, ես պարտվել եմ, պետք է փոխհատուցման ծախսերը վճարեմ:

- Չե՞ք պատրաստվում դատարանի որոշումը բողոքարկել:

- Ես չեմ բողոքարկի, քանի որ չեմ հավատում Հայաստանի դատական անկախությանը, իմաստ չեմ տեսնում:

- Գուցե բանը հասնի նրան, որ Եվրոպական դատարանն դիմեք:

- Դրա համար պետք է այստեղ բոլոր ատյաններով անցնեմ, իսկ ես դա չեմ ցանկանում: Ասեմ Ձեզ, որ անգամ սովետական տարիներին չկար նման բան: Այն տարիներին, երբ, օրինակ, արգելում էին ինչ-որ ֆիլմ ցուցադրել, արգելում էին միայն մեծ դահլիճներում, բայց, օրինակ, Երեւանում կար Ճարտարապետների միության դահլիճ, որտեղ արգելված ֆիլմեր էին ցուցադրում: Այսօր Հայաստանում նույնիսկ դա հնարավոր չէ: Նրանք մինչեւ վերջ փորձում են խանգարել ինձ, բայց դա իրենց չի հաջողվելու:

- Իսկ եթե ցանկանաք կրկին նույն ֆիլմը նկարել....

- Իհարկե, հնարավոր է, դրա համար ժամանակ ու միջոցներ են հարկավոր, մենք այդ ուղղությամբ մտածում ենք:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԻԵՎՆ ԻՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ ՕԳՆՈՒՄ Է ՊԱՇՏՊԱՆՎԵԼ՝ ՁԵՆՔ ՉԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Հարցազրույց Ուկրաինայի նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի (ՌՀԱԻ) փոխտնօրեն, արտաքին հետազոտությունների կենտրոնի ղեկավար **Մաքսիմ Պալամարչուկի** հետ:

- Վլադիմիր Զելենսկին մտահոգություն է հայտնել, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը եւ նրա թիմը մտադիր են Իրանի հետ դիմակայության ավարտից հետո մեծացնել ճնշումն Ուկրաինայի վրա՝ Ռուսաստանի հետ պատերազմը դադարեցնելու համար՝ պահանջելով տարածքային զիջումներ: Այսինքն՝ դուրս բերել ուկրաինական զորքերը սեփական օկուպացված տարածքից: Ինչպե՞ս է Կիեւը մտադիր հակազդել Վաշինգտոնին:

- Ուկրաինան, ինչպես ընդգծել է նախագահ Զելենսկին, շահագրգռված է պատերազմի արագ ավարտով: Միեւնույն ժամանակ, Ռուսաստանի պահանջը՝ Դոնեցկի մարզի չօկուպացված տարածքների հանձնման վերաբերյալ, նույնիսկ մի կողմ դնելով ագրեսորին հանգստացնելու համար տարածքային զիջումների արդարացիության հարցը, պայմաններ է ստեղծում Ռուսաստանի համար՝ հարձակվելու Ուկրաինայի հարեւան տարածաշրջանների վրա: Ուկրաինայի խնդիրն է՝ համոզել Թրամփի վարչակազմին նման որոշման՝ ԱՄՆ շահերի համար ռիսկերի մասին: Ինչպես 1938 թվականին Չեխոսլովակիայի դեպքում, ագրեսորի պահանջների բավարարումը, ամենայն հավանականությամբ, նոր պահանջներ ներկայացնելու հիմք կդառնա: Չպետք է մոռանալ, որ Ռուսաստանի սահմանադրության մեջ եւս երկու ուկրաինական մարզ (Զապորոժիեն եւ Խերսոնը) նշված են որպես Ռուսաստանի մարզեր: ԱՄՆ-ն ստիպված կլինի կամ ուղղակի բախման մեջ մտնել Ռուսաստանի հետ, կամ ընդունել իր կողմից տրամադրված անվտանգության երաշխիքների անհուսալիությունը:

- Ուկրաինայի նախագահը նշել է նաեւ, որ վերջերս ուկրաինական պատվիրակությունը Մայամիում հանդիպել է Թրամփի հատուկ դեսպանորդներ Սթիվ Վիտկոֆի եւ Ջարեդ Քուշների հետ, սակայն բանակցությունները որեւէ արդյունք չեն գրանցել: Իրավիճակն այս պահին որքանո՞վ է փակուղային, ինչ ռիսկեր կան:

- Բանակցությունների հիմնական հարցը տարածքայինն է: Հիմնական ռիսկն ԱՄՆ-ի կողմից Ուկրաինային զենքի վաճառքի ժամանակավոր դադարեցումն է՝ ճնշում գործադրելու համար: Օրինակ՝ Իրանի պատերազմի պատճառով սեփական պաշարները սպառելու պատրվակով: Այս պայմաններում հատկապես դժվար է ապահովել Ուկրաինայի պաշտպանությունը ռուսական հրթիռային հարվածներից: Միեւնույն ժամանակ, ԱՄՆ վարչակազմի համար քաղաքականապես դժվար կլինի երկար ժամանակով դադարեցնել նման մատակարարումները:

- Վերջերս Զելենսկին տարածաշրջանային այց կատարեց Մերձավոր Արեւելք, որից հետո ազդարարեց Ծոցի երկրների հետ պատմական պայմանավորվածությունների մասին, հատկապես՝ ռազմատեխնիկական ոլորտում: Թեհրանն արձագանքեց, որ հույս ունեն՝ տարածաշրջանի երկրները «չեն ընկնի Ուկրաինայի ծուղակը»:

- Ուկրաինայի արտաքին գործերի նախարարության խոսնակ Գեորգի Տիխին մեկնաբանել է Իրանի մեղադրանքները՝ նշելով, որ ոչ մի ուկրաինական անօդաչու թռչող սարք չի հարձակվել Իրանի տարածքի վրա: Միեւնույն ժամանակ, Ռուսաստանին փոխանցված հազարավոր իրանական անօդաչու թռչող սարքեր հարձակվել են Ուկրաինայի տարածքի վրա: Ուկրաինան օգնում է Մերձավոր Արեւելքի իր գործընկեր պետություններին՝ պաշտպանել իրենց տարածքն իրանական հարձակումներից, այլ ոչ թե մատակարարել հարձակողական զենք:

- Իրանն Ուկրաինային համարում է Իսլամական Հանրապետության դեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի ագրեսիայի մասնակից՝ Մերձավոր Արեւելքի հակամարտության գոտի անօդաչու թռչող սարքերի «մասնագետներ» ուղարկելու պատճառով: Ավելի վաղ Զելենսկին նման առաջարկ արել էր Ծոցի երկրներին: Ինչպիսի՞ն է պաշտոնական Կիեւի արձագանքը Թեհրանի առարկումներին:

- Իրանը փաստացի ընդունում է, որ իր ռազմավարությունը հարեւան պետությունների դեմ ագրեսիան է: Ուկրաինան եւ Պարսից ծոցի երկրները ռազմատեխնիկական կապերի երկար պատմություն ունեն, որոնք, բնականաբար, զարգացել են սեփական քաղաքացիական ենթակառուցվածքների վրա հարձակումներից պաշտպանվելու անհրաժեշտության պատճառով:

Արա ԱԼՈՅԱՆ

Ադրբեջանցի բլոգերը հորդորում է ձայն տալ Փաշինյանին

Ադրբեջանում խոշորացույցով հետեւում են Նիկոլ Փաշինյանի քայլերին, մանավանդ՝ ընտրությունների նախաշեմին: Ադրբեջանին ձեռնտու է Փաշինյանի ընտրվելը, քանի որ Ալիեւի եւ ոչ մի պահանջ անկատար չի մնում Փաշինյանի կողմից: Ընտրություններից առաջ ադրբեջանցի հայտնի բլոգերներն են ակտիվացել եւ սկսել են քարոզել Փաշինյանի օգտին:

Քյամրան Ռազմովար անունով բլոգերը ներկայացնում է Հայաստանի ընտրություններին մասնակցող թեկնածուներին եւ հորդորում, որ ընտրությունների օրը քվեարկեն Փաշինյանի օգտին: Մասնավորապես նա ասում է. «Հայաստանում թեկնածուները չորսն են՝ Գագիկ Ծառուկյան, Սամվել Կարապետյան, Ռոբերտ Քոչարյան եւ Նիկոլ Փաշինյան: Գագիկ Ծառուկյանը բիզնեսմեն է՝ 70 տարեկան: Քրիստոսի արձան է կառուցում, դրանով կարող է շատ լավ արդյունք ունենալ տուրիզմի ոլորտում, բայց չի կարող լինել Հայաստանի վարչապետ: Մյուս թեկնածուն Սամվել Կարապետյանն է, ռուսամետ, բիզնեսմեն, միլիարդատեր: Եթե նա գա իշխանության, Ռուսաստանը կրկին կսկսի Հայաստանը ղեկավարել, ոնց դա արել էր վերջին 20 տարիներին: Ուզում եք, որ Ռուսաստանի հետ լինեք, ուզում եք, որ Թուրքիայի սահմաններին կանգնեն ռուս սահմանապահները՝ գնացեք, Սամվել Կարապետյան ընտրեք: Երրորդ թեկնածուն Ռոբերտ Քոչարյանն է, որը ծնվել է Ադրբեջանում, հանկարծ կրկին որոշել է դառնալ Հայաստանի վարչապետ: Մենք գիտենք, թե նա ինչպես է դարձել Հայաստանի ղեկավար, գիտենք, թե 1999 թվականին ինչ եղավ Վազգեն Սարգսյանի եւ Կարեն Դեմիրճյանի հետ: Նրան ընտրելու դեպքում էլ դուք կախված կլինեք Ռուսաստանից: Ո՛չ, Արցախը կամ Ղարաբաղը Քոչարյանը հետ չի բերի: Արցախը հետ բերելու միակ ճանապարհն ուղիղ պատերազմ հայտարարելն է Ադրբեջանին, այլ տարբերակ չկա: Բոլոր ղարաբաղցիներն արդեն Հայաստանի քաղաքացիություն են ձեռք բերել: Կամ որպես տուրիստ պետք է գաք Ղարաբաղ, կամ պատերազմ հայտարարեք Ադրբեջանին:

Եվ, վերջապես, չորրորդ անձը Նիկոլ Փաշինյանն է: Մի քիչ հին մարդ է, բայց հոգեհարազատ է: Ղարաբաղյան կռիվ եղավ, նա ասաց, որ Ղարաբաղը Հայաստան է, բայց հետո այն դարձավ ադրբեջանական: Փաշինյանը Հայաստանում ման է գալիս, «պեռաշկի» եւ սուջուխ է ուտում, շատ մոտ է ժողովրդին: Իրեն այդքան էլ չեն սիրում, նրա հետ անգամ եկեղեցում են կռվում, նա թմբուկ է նվագում, նրանից կինն է հեռանում: Ինչեր ասես նրա օրոք չեղավ, բայց փաստն այն է, որ այս չորս թեկնածուից նա միակն է, որ կպահպանի խաղաղությունը տարածաշրջանում: Մնացած երեքը կամ դեպի Ռուսաստան կգնան, կամ չգիտեմ ուր: Ես խորհուրդ կտամ, որ հայերն ընտրություն կատարեն Փաշինյանի օգտին, քանի որ եթե համեմատենք մյուսների, միլիարդատերերի հետ, Փաշինյանն իրական է, հասարակ մարդ է եւ երեքից ջահել է՝ 50 տարեկան: Ես կրկին հորդորում եմ՝ հայեր, ընտրեք Փաշինյանին»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՈՒՂԻՂ ԵԹԵՐԻ ՄԵՋ ԵՄ, ԱՅ ՈՉԽԱՐ

ԱՐԻՎԱՆ

Ուղիղ եթերում պատգամավորի հետ, հարցերն ուղղում է հեռուստադիտողը:

Հաղորդավար - Այսօր մեր հյուրն է ԱԺ պատգամավորության թեկնածու Ասլան Ասլանիչը: Մինչ ձեր հարցերը կստանանք, խնդրենք հյուրին՝ համառոտ ներկայացնել իր հարուստ կենսագրությունը:

Ասլան Ասլանիչ - Հարգելի սեղանակիցներ... (հուշում են՝ հեռուստադիտողներ) կներեք՝ սեղանին կից դիտողներ... ես աղքատ մարդու տղա եմ: Մեր ընտանիքն այնքան աղքատ էր, որ եթե տղա չծնվեի, խաղալիք չէի ունենա: Մանկուց հաճախել եմ հատուկ օժանդակ դպրոց, ընդունվել եմ քննությունների միջոցով: Այդ դպրոցում յուրաքանչյուր երեխա ընտրություն չէր կարող անել առանց որակավորման: Այսօր երեք դիպլոմ ունեմ, մեկը եւս՝ մինչ ընտրությունները կստանամ նվեր: Ակտիվ մասնակցություն եմ ունեցել Ղարաբաղի ղալմաղալին... հեռակա կարգով: Երբ Շուշին գրավեցինք, Մոսկվայի «Բաքու» ռեստորանում մինչեւ լույս քեֆ արինք թուրքերի հետ, վերջում սալյուտ տվեցինք: Բիզնեսս սկսեցի փոքրից. սկզբում ջրին գազ էի խառնում, հանքային ջրի տեղ ծախում, հետո գազին ջուր էի խառնում՝ ծախում: Օրերս լիֆտերի գործարանը լիֆտերի շուռ տվի: Հիմա մեր արտադրած լիֆտերը տոննաներով Չինաստան ենք ուղարկում, մարդիկ ծառերից կապում են ու ճոճվում դրանց մեջ: Պայթուցիչներ եմ արտադրում. կգտնեք այնտեղ, որտեղ թողել եք ձեր երեխաներին: Ես կարդալ չեմ սիրում, գրում եմ: (Բջջայինի զանգի ձայնն է լսվում)

Խանգարում ես, արա... ուղիղ եթերի մեջ եմ... Այ ոչխար...

Հաղորդավար - Ունենք հեռախոսազանգ: Ալո, դուք եթերում եք...

Հարց - Ասլան Ասլանիչ, մեզ հետաքրքրում է՝ դուք հարո՞ւստ մարդ եք...

Ասլան Ասլանիչ - Ես եկել եմ ասուլիս տալու, ոչ թե պարծենալու...

Հարց - Դուք բախտավո՞ր մարդ եք, որ մեզ նման ընտրող ունեք...

Ասլան Ասլանիչ - Կանայք են բախտավոր... նրանք կին չունեն:

Հարց - Դուք դժգո՞հ եք Ձեր կնոջից...

Ասլան Ասլանիչ - Նա դեռ կարծում է, թե ամուսնացել եմ իր հոր հարստության համար: Ես էն տղեն եմ, որ կամուսնանայի ցանկացած հարուստի աղջկա հետ:

Հարց - Ինչպե՞ս գտաք Ձեր կնոջը...

Ասլան Ասլանիչ - Ես գտա, ոչ մեկին չմեղադրեք:

Հարց - Մոտավորապես քանի՞ մարդ է աշխատում Ձեր հիմնարկում...

Ասլան Ասլանիչ - Մոտավորապես՝ կեսը:

Հարց - Իսկ այդ «կեսը» չե՞ն պատմում իրար, թե ինչ են անում...

Ասլան Ասլանիչ - Չէ, ոչխարների նման լուռ աշխատում են:

Հարց - Կարո՞ղ ենք երջանիկ ապրել...

Ասլան Ասլանիչ - Իհարկե, մարդ չի կարող ամբողջ օրը ուտելխմել: Խոսքն իմ մասին չէ: Միակ պարտականությունն աշխատելն է: Աշխատեք, բարեկամներ, աշխատեք, որ երջանկությունը ձեզ այցելի...

Հարց - Իսկ Դուք ինչո՞ւ եք ուզում պատգամավոր դառնալ...

Ասլան Ասլանիչ - Էլի ձեր մասին եմ մտածում. ուզում եմ իմ մասին մտածելու հոգսից ձեզ ազատեմ:

Հարց - Մեր ազգը քչանում է: Մեր պապերն ունենում էին 10-12 երեխա...

Ասլան Ասլանիչ - Հարցը հիմնավոր կլուծեմ. կհավաքագրեմ 20-24 զույգ, կունենանք 10-12 երեխա:

Հարց - Մեր մշակույթի գործիչները դժգոհում են՝ իրենց գլուխը չեն կարող պահել...

Ասլան Ասլանիչ - Ես կարծում էի՝ մշակույթի գործիչները մշակույթն են պահում:

Պատգամավորն անում է այն, ինչի համար մյուսները կհայտնվեն ճաղերի ետեւում: Դրա համար էլ ասում եմ՝ ճիշտ ընտրություն կատարեք, իսկ մենք մեր ոչխարներով կօգնենք, որ դուք չսխալվեք... (Զանգ) Այ օչխար, չասի՞ ուղիղ եթերի մեջ եմ... Ո՞վ է... Պարոն վարչապետ, Դո՞ւք եք... Հիմա գալիս եմ... ժողովուրդ ջան, կներեք, «վերեւից» է: Թող մեր սեղանակիցներն իրենց հարցերը շարունակեն: Ես գնացի...

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՄԻ ՄԱՍԸ ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ Է ԱՊՐԵԼ, ԲԱՅՑ ՉԵՆ ՈՒԶՈՒՄ ՀԵՏՔԱՅԼ ԱՆԵԼ

Հարցազրույց արձակագիր, դրամատուրգ **Գուրգեն Խանջյանի** հետ

- Այսօրվա քաղաքական եւ մշակութային գործիչների մի մասը եղել են Ձեր խմբագրած «Գրեթերթի» եւ Հայաստանի գրողների միության երիտասարդ գրողների սեկցիայի սաներ, որի պատասխանատուն ես էի: Այդ ինչպե՞ս նման սերունդ մեծացավ՝ անկախության շրջանում ձեւավորված. Արցախ հանձնող, ցեղասպանություն ուրացող, պատմություն ու հիշողություն ժխտող... Ցավոք, այն ժամանակ էլ դա տեսանելի էր, եւ մենք լայնախոհ ըմբռնումով համարում էինք, թե դա այլընտրանքային մտածողություն է:

- 2018-ին, երբ սկսվեց այդ չարաբաստիկ շարժումը, հրապարակում հիմնականում ջահելներն էին: Հիշում եմ, երբ տնից դուրս էի գալիս, հանկած լսում էի՝ Օրբելի փողոցը փակածների միջից գոռում էին՝ պարոն Խանջյան, միացեք, պարոն Խանջյան... նայում էի՝ մեր թերթի հեղինակներն են: Ոգեւորված էին, նրանք այն ժամանակ տասնութ-քսան տարեկան երիտասարդներ էին, ջահելներին բնորոշ է հեղափոխական անհեռատես ոգեւորությունը: Հիմա նրանց մի մասն անպայման հիասթափություն ապրել է, գրող են, ի վերջո, տեսնելու էին՝ այս ամեն ինչն ուր է գնում: Բայց քանի որ խիստ էին խանդավառված, հիմա երեւի չեն ուզում հետքայլ անել, իրենց սխալը խոստովանել: Բայց գրողը, արվեստագետը պիտի համարձակ լինի. սխալվել ես, ոչինչ, պատահում է, սխալը նաեւ նրա համար է, որ մարդ կարողանա սթափ հետեւություններ եզրակացնել ու հաջորդիվ ճիշտ քայլեր անել: Մի մասն էլ հարմարվել է, կոմֆորմիզմի վարակն է, սպառողական հասարակություն է ձեւավորվում, չէ՞, հարմարվել, լռել:

- Գուրգեն Խանջյանն իր ապրած ժամանակի գրողն է, մեր ժամանակը գրող գրողն է: Այսօր ի՞նչ կգրեք, կարծում եմ՝ գրելու նախանձելի նյութ ունենք:

- Գրական եռանդս տարիքի հետ մի քիչ պակասել է, հանդարտ էսսեիստիկայի կողմն է թեքվել, ցավում եմ, որովհետեւ էս ժամանակն այնպիսի ցցուն կերպարներ է մատուցում, այնպիսի իրավիճակներ, պիեսների ու վեպերի հրաշալի նյութ: Օրինակ, մեր առաջնորդի եւ նրա ուսապարկերի կերպարները: Գրականության մեջ շատ կան, չէ՞, նման կերպարներ, բայց մերը բացառիկ է: Հուսամ, որ ավելի եռանդուն գրողներ կհայտնվեն ու կանդրադառնան իրենց ժամանակին, կգրեն այն: Թեեւ սխալվում եմ, նրանցից մի քանիսն արդեն գրել են ու լավ են գրել: Իսկ, առհասարակ, գրականության համար մի քիչ ցավ եմ ապրում՝ այն իմաստով, որ սպառողական հոգեբանությունը մտնում է նաեւ գրողների մեջ, ջահել գրողների մի մասը գնում է այդ, այսպես ասած, «ֆաստֆուդային» տրամաբանության ճանապարհով՝ արագ սպառվող գրականություն, հաճելի, թեթեւ ընթերցելիք, որ ընթերցվում է, ասենք՝ կարկանդակ ուտելու պես, որ կծում ես, կեսից կարող ես շպրտել ու ոչինչ չես կորցնի: Բայց, մյուս կողմից, քանի որ մեր երկրում ընթերցողը փոքրաքանակ է, եւ գրականությունը, այսպես թե այնպես, բավարար փող չի բերում գրողին, իսկական գրականությունն իր տեղը պահպանում է: Պակասում է, սեղմվում է, բայց՝ ադամանդի պես, ինչքան սեղմվում, այնքան ավելի է փայլում: Նույնն էլ մեր ընթերցողն է՝ քչացել են, բայց կա մի շրջանակ, որ իսկական արժեքը ճանաչում է եւ գնահատում: Ամեն դեպքում, իսկական գրականությունը մնում է՝ պակասում է, բայց մնում է, եւ նրա ընթերցողն էլ է մնում:



Հուսիկ Արա

ՄԵՆՔ, ՀՆԱՐԱՎՈՐ Է, ԿՈՐՑՆԵՆՔ ՌՈՒԲԻՆՅԱՆԻՆ

Ստեղնում է ՔՊ-ի կարեւորագույն թեզերից մեկը եւս… Բայց ինչո՞ւ միայն ՔՊ-ի: Ով գիտի, թե այդ թեզն ով է հուշել նրանց, նրանք էլ թութակի պես կրկնում են… Թե բա՝ Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստանը», ընտրություններում հաղթելուց հետո, վարչապետի պաշտոնը զիջելու է Ռոբերտ Քոչարյանին: Արա, ՔՊ, ո՞վ է ձեզ հուշել այս միտքը, չէ՞ որ դուք սկզբում միաբերան հայտարարում էիք, որ Սամվել Կարապետյանը չի կարող դառնալ վարչապետ, օրենքը թույլ չի տալիս… Ինչո՞ւ հիմա չեք խոսում այդ մասին: Համոզվեցի՞ք, որ կարող է: Ահա՜մ… Դե հիմա ինձ ասացեք, խնդրեմ, դուք քանի՞ մարդու եք ճանաչում, որ ընտրություններում հաղթելուց հետո իր ձայները տվել է ուրիշին՝ արհամարհելով իր կուսակցությանը եւ ուրանալով իր խոստումներն ու ընտրողներին: Քաղաքականությունը, իհարկե, հնարավորությունների արվեստ է, բայց ոչ նման էշություն անելու տեղ: Այդպես չէ՞: Կարո՞ղ եք ինձ ցույց տալ այդպիսի մարդու: Չեք կարող: Հետեւաբար, ձեր (բայց ինչո՞ւ ձեր) այն պնդումը, որ Սամվել Կարապետյանը հեսա հաղթելու է եւ իր հաղթանակը նվիրի Ռոբերտ Քոչարյանին, մեղմ ասած, մաքուր էշություն է, իսկ ձեր վախն այդ սցենարից՝ էշության հետեւանք:

Մի խորհուրդ տամ՝ հրաժարվեք այդ թեզից, հակառակ դեպքում հնարավոր է մարդուժի կորուստ ունենաք՝ ի դեմս Ռուբեն Ռուբինյանի: Նա գրազ է եկել, որ եթե Սամվել Կարապետյանը հաղթի ու իր հաղթանակը հանկարծ չնվիրի Ռոբերտ Քոչարյանին, ինքնասպան կլինի: Խորհուրդս սա է՝ տեր կանգնեք ձեր «Քըլըչին», այլապես կկորցնեք նրան, ու հայ-թուրքական բանակցությունները կիսատ կմնան:

Ես ՔՊ-ին ավելի անշառ գրազ եմ առաջարկում: Վտանգավոր ոչ մի բան չկա, եւ եթե Նիկոլն ուզենա, կարող է մասնակցել իր ողջ թիկնազորով, ՆԳՆ-ով, ԱԱԾ-ով, Սուրեն Պապիկյանով, դատախազով, քննչականով, ՄԻՊ-ով-բանով… Ալեն Սիմոնյանի ու Ռուբեն Ռուբինյանի մասին էլ չեմ ասում՝ նրանց մուտքն ազատ է: Դեպքերը տեղի են ունենալու փակ տարածքում, որտեղ ինձնից եւ ՔՊ-շնիկներից բացի ուրիշ մարդ չի լինելու: Գրազի համար պետք են մի ընդարձակ սենյակ, հավի հում ձու եւ խաշի մեծ կաթսայի կափարիչ: Ռուբեն Ռուբինյան, կուզե՞ք ձեր տանը կազմակերպենք, որ հետո գրազից փախնել-մախնել չլինի… Ինչեւէ, ես հավի հում ձուն դնելու եմ հատակին, իսկ դուք (սաղ ՔՊ-ով) պետք է այն կոտրեք խաշի կաթսայի կափարիչով: Կկարողանա՞ք… Ես պարտավորվում եմ յուրաքանչյուրիդ մեկ ամսվա պարգեւավճար տալ, եթե կոտրեք ձուն: Նկատի ունեցեք, որ կափարիչը կտոր-կտոր անել, ծռմռել, ծամել, կծել չի կարելի: Այն պետք է մնա նույն տեսքով, մինչեւ գրազի ավարտը: Իսկ եթե ձուն չկոտրեք, սաղ ՔՊ-ով ինձ համար մեկ շիշ «Նաիրի» կոնյակ եք առնում, որ խմեմ ձեր կենացը՝ հունիսի 8-ին իշխանությունից սուսուփուս հեռանալու կապակցությամբ: 48 ժամ եմ տալիս, որ արձագանքեք:

Իսկ հիմա՝ կարեւորի մասին: Ինչո՞ւ է վերջերս Նիկոլ Փաշինյանը ռեւերանսներ անում Ռուսաստանին եւ, առհասարակ, ինչո՞ւ է գնում Մոսկվա: Այս հարցերի պատասխանները ես ունեմ, բայց վստահ չեմ, որ այս թեմայով Նիկոլ Փաշինյանն անկեղծ զրույց է ունեցել Ալիեւի, Էրդողանի, Թրամփի, ԵՄ հանձնակատարների հետ: Կներեք, իսկապես սիրուն չէ… Այդ մարդիկ պահեն քեզ, օգնեն, որ քարշ տաս պարտված իշխանությունդ, խոստանան էլի փող տալ, որ մնաս իշխանության, իսկ դու ընտրություններից առաջ հայտարարես, որ Ռուսաստանը մեզ բարեկամ երկիր է, ու գնաս Մոսկվա՞: Ո՞վ կհասկանա, ո՞ւմ բացատրես այս «նրբությունը»: Կարող է, չէ՞, պատերազմ սկսվել… Բայց եթե ամեն ինչ բարեհաջող ընթանա, հասնենք ընտրությունների, եւ այդ ընտրություններում էլ հանկարծ ՔՊ-ն հաղթի, հնարավո՞ր է, արդյոք, որ մենք ուրիշ վարչապետ ունենանք: Հա, էլի, Մոսկվայից վերադարձած Նիկոլը վերցնի ու հրաժարվի հօգուտ ուրիշի, օրինակ՝ Սամվել Կարապետյանի: Ռուբինյան, ի՞նչ կասես, հնարավո՞ր է, որ այդպիսի բան տեղի ունենա: Չէ՞: Իսկ ինչո՞ւ ես կարծում, որ Սամվել Կարապետյանը կհրաժարվի իր հաղթանակից՝ հօգուտ Ռոբերտ Քոչարյանի: Բա կյանքիդ վրա գրազ ես գալիս, չիմանամ՝ որտեղից քեզ այդ ինքնավստահությունը:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Հայաստան եկող բեռնատարը գնդակոծվել է

Արաբական Միացյալ Էմիրություններից Հայաստան եկող բեռնատարն Իրանում հայտնվել է գնդակոծության տակ: Դեպքը տեղի է ունեցել մի քանի օր առաջ՝ հայ-իրանական սահմանին գտնվող «Նորդուզ» անցակետից մոտ 500 կիլոմետր հեռավորության վրա: Սա նմանատիպ առաջին դեպքն է: Բեռնարկղում ավտոհիդրավլիկ վերամբարձ սարք է եղել: Ռմբակոծության պահին բեռնատարը կայանված է եղել, իսկ իրանցի վարորդը մեքենայում չի եղել, ինչի շնորհիվ հաջողվել է խուսափել զոհեր ունենալուց:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 1.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՆԻԿՈԼԻԶՄԻ «ՖԵՆՈՄԵՆԸ»՝ ԿԱՐՄԻՐ ԳԾԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

2020թ. 44-օրյա պատերազմում կանխորոշված պարտություն տանելուց հետո նիկոլիզմը մեկ խնդիր է լուծում՝ ամեն գնով պահել իշխանությունը, ստորադասելով պետական ու ազգային շահերը, կատարելով թշնամու բոլոր պահանջները, մուրալ «խաղաղության պայմանագիր»՝ ստորացուցիչ պայմաններով, երկիրը տանելով վերջնական կապիտուլյացիայի:

Մաս 1

2018-ին երիտհայերն իշխանությունը «վերցնելուց» հետո հայտարարեցին, որ իրենք որեւէ գաղափարախոսության կրող չեն, եւ տարիների ընթացքում այդ դատարկությունը լցվեց Նիկոլ Փաշինյանի՝ իրար հաջորդող եւ իրարամերժ, հաճախ իրար հակասող մանիպուլյատիվ խոսույթով, ինչը շատ հաճախ անվանում են նիկոլիզմ: Նիկոլիզմն ամբողջական ընկալելու համար անհրաժեշտ է վերլուծել Նիկոլ Փաշինյանի էությունը, մասնավորապես՝ Նիկոլ լրագրողի, գործընկերոջ, ընդդիմադիր գործչի, քաղաքական գործչի, վարչապետի եւ, վերջապես՝ մարդու տեսակը:

Մինչեւ 2006թ. Նիկոլի հետ հազվադեպ էինք հանդիպում, տարվա մեջ մի քանի անգամ. մեկ անգամ՝ «Հայկական ժամանակ» թերթի ֆինանսական հաշվետվության հարցով, իսկ մնացածը՝ հարցազրույցների առիթներով: 2006-ին, երբ նախաձեռնվեց «Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնությունը, մեր հանդիպումները դարձան հաճախակի, քննարկվում էին երկրի զարգացման տարբեր ոլորտները: Նիկոլն այն քչերից էր, որ մասնակցում էր բոլոր քննարկումներին եւ փորձում էր իր ոչ «ստանդարտ» տեսակետներն արտահայտել: Արդեն այդ ժամանակ նկատելի էր, որ ցանկացած հարցի շուրջ եթե իր կարծիքը հավանության չէր արժանանում, նա այլ կարծիքներ չէր ընկալում, եւ մարդկանց չլսելու այդ բնավորությունը դարձավ իշխանավարման ժամանակ գործելաոճ, ավելին՝ այն դարձրեց նաեւ իր «քաղաքական» խմբակի գործելաոճը:

Հաճախ, երբ իր տեսակետին հակառակ կարծիքները դառնում էին համընդհանուր, նա հավասարակշռությունից կարող էր դուրս գալ: Վերջերս, օրինակ, նման իրավիճակ արձանագրվեց, երբ պարգեւավճարների հարցում հանրային դժգոհության մեծ ալիք բարձրացավ: Նա հայտարարեց. «…եթե ժողովուրդը դեմ է, թող նորից հեղափոխություն անի, բերի Սերժ Սարգսյանին»:

Այս գործելաոճը ժամանակի ընթացքում էլ ավելի զարգացրեց եւ դարձրեց իր գոյատեւման բանաձեւը. «…եթե ինձ չեք հանդուրժում, ուրեմն այլընտրանքը նախկիններն են», եւ այդ նպատակով տասնամյակներ շարունակ նախկին ռեժիմի դեմ պայքարող, այդ թվում՝ իր գործընկեր քաղաքական ուժերին լուսանցք մղեց, չեզոքացրեց, իսկ 2021-ին ԱԺ արտահերթ ընտրություններից առաջ փաթեթով ձեւավորեց իր «հաճախորդներին»՝ քաղաքական մրցակցային ֆոն ապահովելու համար:

Նա բնավորության մի առանձնահատուկ գիծ եւս ունի. ելնելով իր շահերից, կարող է ցանկացած մարդու առաջ խոնարհվել ու նվաստանալ, նույն ձեւով կարող է ցանկացած հեղինակություն անտեսել՝ անցնելով բոլոր մարդկային սահմանները: Եվ դա դրսեւորվեց իր իշխավարման ընթացքում, երբ փողոցային բառամթերքով պատասխանում էր Լեւոն Տեր-Պետրոսյանին, իսկ նախկինում խոնարհվում ու ենթարկվում էր, ինչպես հիմա է քսմսվում Էրդողանին ու Ալիեւին: Վերջերս էլ ականատես եղանք, թե մետրոյում ինչպես է ղեկավարին ոչ հարիր, առավել եւս տղամարդուն ոչ վայել կեցվածքով հարձակվել արցախցի կնոջ ու երեխայի վրա: Իսկ կարճ ժամանակ անց, հասկանալով, որ իր գահավիժող վարկանիշը զրոյանում է, ներողություն հայցեց: Ամենավտանգավորը՝ նա չունի կարմիր գծեր ընդհանրապես, առավել եւս՝ մարդկային հարաբերություններում, եթե կա անձնական ու քաղաքական շահ:

Շարունակելի

Պետրոս ՄԱԿԵՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am